

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Յ. ԳԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԷԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵԻՆ

ԱՐԻԻՆԻ ՃԱՄԲԷՆ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ 4 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

ԳՐԵՑ

Պ. ԲՈՆԱՏ

Նիւրբ Բալուսաձ Եւ յարգարուսաձ Պ. Ա. Ահարոնեանի
« ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ » Երկերէն :

Ա.ԼԵՆ Իրաւունք վերապահուսաձ

Հ. Յ. Իսաւնակցուրթեան

ԳԱՀԻՐԷ

1916, ՓԵՏՐ. 10



ԱՐԻԻՆԻ ՃԱՄԲԷՆ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ 4 ԱՐԱՐՈՒԱԾՈՎ


ԳՐԵՑ

Ղ. ԲՈԼՍՏ



40440

Ելիքը փաղուած եւ յարդարուած Պ. Ա. Ահարոնեանի
«ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ» Երկեան:




ԳԱՀԻՐԷ:

1916, Փետր. 10







ՀՐԱՆՈՒՇ . . . ԶՆԱՆՎՈ . . .

■ Հայրական անմխիթար բախիձով համակ, երկիւղած բարեպաշտութեամբ կը մասշիւմ ի գահ Յուսարձանիդ, արժասուարոր աչերով ծնրադիր՝ բու յիւսասակիդ ձօնելու համար այս երկը . քեզի՝ որ այնքան սիրեցիր գեղարուեստը, ողբերգեցիր հայրենիքդ, եւ որ գարնանամուտիդ, բարձրապաց երազներուդ մէջ, պատրանք պատրանք սաւառնած պահուդ, յանկարծ նպտտակիդ վախձախուտսքին վրայ ինկար գահավեժ, ուխտաւորի պատմունանը ուսիդ, բաղձանքներդ արտիդ, կարօք աչերուդ — կարօք՝ հայրենիքիդ, կարօք գաղափարիդ, կարօք սիրելիներուդ . . . ■

ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԷՐ ՍԱՐԳԻՍ — Գիւղին քահանան, մօտ 60 տարեկան
ԵՐԷՅԿԻՆ — Տարէց կին մը :

ԹԱԹՈՒԼ — Տէր Սարգիսի որդին, 26 տարեկան երիտա-
սարդ, բարձրահասակ, յաղթանաւ :

ՉԱՐՕ — Տէր Սարգիսի աղջիկը :

ՌԷՍ ՄՐՏՕ — Գիւղապետ, մօտ 45-50 տարեկան :

ԿԱՐՕ, ՊԱՂՏՕ — Գիւղացիներ :

ՇՈՒՇԱՆ, ՍՄԲՈՒԼ — Նալօյի և Մուրօյի կիները, 25
տարեկան :

ՇՈՂԻԿ — Նալօյի աղջիկը, 10 տարեկան :

ՅՈՎԼԿ — Մուրօյի որդին, 10-12 տարեկան :

ՀՕՏԱՂ ՄԸ — 16-18 տարեկան պատանի :

ՄԻՐՉԱ ՊԷԿ — Քիւրտ պէյ մը, 45-50 տարեկան :

ՌԱՓԱՅԵԼ — Նախկին վարժապետ, յեղափոխական խում-
բի խմբապետը :

ՎԱԶԳԷՆ — Խումբին ստանապետը :

Յեղափոխականներու խումբ մը : Գիւղացիներ (այր,
կին, տղայ) : Միրզա պէկի խումբները, Հասօ, Մասօ, և շն.



ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆ



Լեռնավայր մը :

Այ կողմէն կ'երկարի դեպի խորը, իրար շղթայուած
ժայռուս բլուրներու ելեւջաւոր շարք մը, որոնց ոսկերուց
առջեւ տարածուած է Լեռնահովիտ մը, բլուրներու դարձ-
դարձիկ ծամածռութիւններով եզերուած : Առաջակողմը
անաւոր կեցուածքով եւ փետեկուած պառակներով միա-
պաղաղ ժայռ մը, հպարտ, հերձուած եւ անխաչելի կա-
տարով, որուն կողերէն բրդած մեծ ու փոքր փափ գան-
գուածներ մինչեւ ոսկերք ցրուած :

Ժայռի աջ կողմը դեպի ներս դարձած եւ փետեկ-
ուած ապառաժի մը խոռոչէն ջուր մը կը ժայքի, որ
ուղղուելով դեպի հովիտը, առուակ մը կը ձեւացնէ,
եւ օձապտոյտ խաղճով կ'անցնի կ'երթայ :

Ջուրին իջած ու դարձած սեղը մէկ փանի ուռեցիներ
եւ հնազարեան հասաբետ սօսի մը բազկատարած ուսե-
րով, կը ձեւացնէ գեղատեսիլ հովանի մը, որոնց ստորսք
երկու խոռոչ երկայնամիտ տաշեր, կը ծառայեն գիւղաց-
ւոց լուացքի եւ նախիրը ջրելու :

Ժայռին դիմացի կողմը, դեպի առաջ, հարթավայրին
վրայ Տեր Սարգիսի կալը կը տարածուի, որուն մէջ միայն
երկու դեղեր մնացած են, մին մեծ՝ միւսը փոքր :

Պայծառ ցեղէկ է, կալը արեւամոյց, իսկ ժայռի ստ-
որսքը սոււերոտ, ուր մէկ փանի ծառի ուսերէ շինուած
երկայնամիտ երկու ցած նստարաններ :

ՏԵՍԻԼ 1

Վարագոյր բարձրացած ասեմ, հովիտի ձախ կողմէն կը մտնեն ու կը յառաջանան բեմը՝ գիւղացիներու բազմութիւն մը, որ մեռելաբաղէ կը վերագառնան :

Տէր Սարգիս եւ Ռէս Մրօ կողք կողքի առջեւէն, յետոյ Կարօ, Պաղօս եւ Թաթուլ, որոնց կը հետեւին գիւղացիներ :

Ամենք միասին աղօթքի կը կենան . քահանայն բազկասարած, աչքերը երկինք յառած, ժայռին առաջը կեցած: Երգեցիկ խումբը դիմացի կողմը, որոնց ետեւ գիւղացիները : Երգեցիկ խումբը կ'սկսի երգել . գիւղացիները ձեռներնին կուրծքերնուն վրայ խաչաձեւ, զուլանին կախ, երկիւղածութեամբ կ'ունկնդրեն :

ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔԸ

Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս,
Եւ արա զնոսա պայծառ .
Զողորմութիւնդ վերին,
Հանեա՛ ձօնել նոցին,
Զի նովիմք մարդասցին,
Ապրիլ յասիս, յասիս :

2

Ո՛վ Տէր մեր, Տէ՛ր փութա՛,
Զազգն մեր համայն փրկեա՛
Ի բժնամեաց :
Կափո՛ գաչս նոցին,
Հաս զարմատոյ զբուն
Եւ զազգ մեր պարսաւուն
Արա հոգօ՛ր :

3

Աչնովդ համասարած,
Զազգն մեր արահալած,
Փոյթ զումարեա՛ :
Յաշխարհ Արարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց :

Տէ՛ր ՍԱՐԳԻՍ.— (Ձեռնով աջ ու ձախ խաչակնկելով)
... Պահպանիչ և յոյս հաւատացելոց Քրիստոս Աստուած մեր, պահեա՛, պահպանեա՛ զժողովուրդս այս ամենայն փորձութենէ . . . Օրհնեալք եղերուք ի շնորհաց սուրբ հոգւոյն, երթալք ի խաղաղութեան, և տէր ընդ ձեզ եղիցիւ ամէն . . . : (Յամրաբալլ դեպի նստարանները ուղղուելով) Աստուած խոզիներ լուսաւորի . . . Որդին Աստուած ձէ՛ պահի պահպանի ի չար փորձանաց . . . Հոգին սրբով էլ մխիթարուէք . . . (Քահանայն նստարանին առաջը կեցած, ժողովուրդը մեկ մեկու ետեւ աջը համբուրելով կը մեկնի, որոնց հետեւեալ խօսքերը կ'ուղղէ) Բարո՛վ, հազա՛ր բարով . . . Բարի՛ տանէք ձեր տուն . . . (Գիւղացիները մեկնած ասեմին հետեւեալ խօսքերը կ'ընեն) .

ԳԻՒՂԱՅԻՆԵՐ.— (Մեկնած պահերնուն) Մ՛ացէք բարով . . . բարին վըր ձեր տան . . . Աստուած խոզիներ լուսաւորի . . . :

(Շուտան եւ Սմբուլ, իրենց տղոց ձեռքէն բռնած, արտասուազից կուգան տեսնոյ աջը առնելու) :

ՇՈՒՇԱՆ.— (Քահանային աջը համբուրելով) Մեռնի՛մք ի կարգին, տէրտէ՛ր, էս ի՞նչ ձուն ա թափուաւ վըր մեր գլխին . . . Աստուած լէ մոռացաւ մեզիկ . . . վո՛ւյ, մարէ՛, վո՛ւյ, ըտանամ . . . (Երկու ձեռնով երեսը գոցած կ'արտասուէ) :

Տէ՛ր ՍԱՐԳԻՍ.— Մե՛ղք ա, մատաղ, Աստուածուն դէմ արտունջ մի՛ անի . խոզին սրբով մխիթարուէք . . . Աստուածուն կամքն էսպէս է եղել, ի՞նչ աննիք . ինքն սուտեց, ինքն էլ առաւ :

ՇՈՂԻԿ.— (Մօրը եղանցեան բռնած եւ անոր երեսն ի վեր նայելով) Մարէ՛, մկա մենք ի՞նչ կ'աննիք, որ պապէն չիկայ :

ՇՈՒՇԱՆ.— Քէ մեռնիմ, զիմ աչից լուս, ի՞նչ անել . . . Աստուածուն դազապ էս անօրէնների գլխին . . .

ՅՈՎԻԿ.— Զիմ պապ լէ տարան Շողիկ, չե՞ս տեսնի :
Մարէն կ'առէ՝ որ ախրամէրին աղօթանք, Աստուած պա-
պէն նորից կ'օրողկի . . . :

(Սոյն միջոցին Կարօ եւ Պաղօ իրար հետ խօսելով,
յամբաբայ ժուռ կուգան, Ռեւս Մրօ զբազամ է չիբուխը
մաքրելով լեցնելու, իսկ Թարուկ մտազբաղ կիները կը
դիտեն) :

ՍՄԲՈՒԼ.— (Տեսրոջ աչք առնելով) Գնա՛նք, քու-
րուկ, գնանք մեր սեւ լանք . . . : Մ'ացէք բարի, տէր-
տէր (զլխիկոր կը մեկնին, բեմին վրայ կը մնան Տէր Սար-
գիս, Ռեւս Մրօ, Կարօ, Պաղօ, Թարուկ եւ կը նստին) :

Տէ՛ր ՍՍՐԳԻՍ.— Ռէ՛ս, կ'առէիր էս անօրէններ հա-
րեան զիւզ աւերած ու թալանած են . . . Չեզնի՞
խտտի զէզեր կ'այրուեն . . . :

Ռէ՛Ս ՄՐՏՕ.— (Որ նոյն միջոցին չիբուխը կը վառէր,
հառաչելով ծուխը դուրս կուտայ) Խօ՛, սարերից մեր
տղերք տեսեր են . . . մկա դու կ'ասես խտտի զէզեր . . .
էնէ՛ . . . (զլուխը կը շարժելի) :

ԿԱՐՕ.— Ախրը, ի՞նչ օրերի ենք հասել, Ռէ՛ս Մրօ .
էսիկ համան բան ա . վաղ կիզան մեր զիւզ լէ թալա-
նելու էս գազաններ, չէ՞ . . . : Տէ՛րտէր, դու ի՞նչ կ'ա-
սես, էս իրայ ֆրիստոնի մեղք ի՞նչ ա, որ էսպէս
տատի՛, վատակի, աղօթա՛յ, ու քուրտն աւարի տայ
հա՛մ իր տատանք, հա՛մ իր պատիւ, համ լէ զիւր
կեանք . . . զըմմէ՛ն, զըմմէ՛ն :

Տէ՛ր ՍՍՐԳԻՍ.— Օրհնա՛ծ, Կարօ՛ ջան, ի՞նչ անել,
մեր մեղքից ա, չի՞ . . . : Ես ինչի՞ կ'ասեմ, ըմէն օր,
աղօթա՛նք Աստրծուն, որ աշխըրի մեղաց թողութէն
չնոր՛ի . . . էլ ի՞նչ կարող ենք անել . . . Աստրծուն ողոր-
մութէն հասնէ . . . :

ԿԱՐՕ.— Ախրը ես չեմ ասի չաղօթանք, բայց էսպէս
լէ չեզնի, Տէ՛ր Սարգիս պէտք ա ճար՛մ մտածել : Որ էս

մարմնաւոր աշխըրի մէջ պէտք է սպրենք, խօ՛, մար-
դու պէս սպրենք . . . Ախրը ի՞նչ ա՛ էս մեր քաչած
զուլում, մարդ որ քար եղնի չի՛ դիմնայ . . . էնէ՛ . . .
ախտոս ա՛ մեզ, մեր ջանիլ ջիվաններին, մեր քուր-
ֆաթին . . .

2

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ՀՕՏԱՂ ՄԸ

ՀՕՏԱՂ.— (Պայուսակ մը ունի ի վար կախած, ցուպ
ի ձեռին, սարսափահար դեմնով կը յառաջանայ) Յաւա-
րէ՛ . . . (ժայռի ստորը նստողները տեսնելով, դեպ անոնց
կ'ուղղուի) Մարէ՛, համա՛ն, համա՛ն բան, երեկից ի
վեր ողջ զիւզ կրակի տրուած, կ'այրի՛ հա կ'այրի՛ : Ճըլ-
վըրցի ձէն լեռներ, սարեր բռներ ա, զուլում . . . զու-
լում . . .

ՍՄԵՆՔԸ.— (Շեմկիւմ ականջ կը դնեն հօտաղին եւ
կը մըմըման) Տէ՛ր ողորմեա՛, տէ՛ր ողորմեա՛ . . . :

Ռէ՛Ս ՄՐՏՕ.— Ղուբպա՛ն, ո՞րտեղաց կիզա դու,
հօտա՞ղ ես . . . :

ՀՕՏԱՂ.— (Չեմքի ցուպին կորնած) Մեռնի՛մ քէ,
Ռէ՛ս, էն զիւզի հօտաղներից եմ . էսիկ լեռ փախայ ու
պրծայ . . . Սը՛ր կարապետ, համա՛ն պան ա պապէ՛ . . .
մարդ խելացը կ'եզնի, չո՛ւր իրիկուն էս անօրէններ
զիւզ կրակիցին ու թալանեցին . . . Իրիկնամուտին գա-
զաններ չան ոսնոցներով լեռան ոտքով կ'անցնէին հա՛
կ'անցնէին . . . ասեա թալաններով բռնաւոր . . . Չանել
աղջիկներ, հարսներ . . . ո՞ր մէկ ասեմ . . . :

Տէ՛ր ՍՍՐԳԻՍ.— (Հառաչելով եւ ձեռները բազկասա-
րած) Մեղա՛ տէ՛ր, մեղա՛, քուեա զիս յանօրինութենէ
իմմէ . . . (Բացի Թարուկէն, որ ձեռքը ձեռքին կը մտածէ,

ամենքը միասին) Տէ՛ր ողորմեա, աէ՛ր ողորմեա . . .

ՀՕՏԱՂ.— (Շարունակելով եւ ձեռով հետուն ցոյց տալով) Ախպերս ասեմ, եսիկ թագնուամ էի էն սարի վերեւի Տիրամէրի ծառի խոռոչքի մէջ, արանքից կ'ի-րիշկէի . . . Ըզո՛րդ, դուլում բան էր, սիրտ չէր դիմ-նայ էն լաց ու կոծին, էն դէս ու դէն շարթուամ երա-խաների ճլլլոցին . . . Մէկլէ ի՞նչ տեսնեմ, Սը՛ր կարա-պեա, մեր տղերք անտառի գազաթից, ծառերի յետե-գուզ արած կրակ բացեցին . . . տրաքեցի՛ն հա տրաքե-ցին . . . քրդերն ասեա, էն դազաններ, սարսըիած, յո՛ր փախչելնին չէին գիննա . . . իրենք լէ կրակեցին, թա՛յ հօ . . . յո՛ր կը հասնէ իրենց կրակ . . . մկա ես ասեմ տաս, դուք ասացէք քսանն էլ քի՛չ ա, գելու պէս ու-նալով կ'ընկնէին գետին, մեր տղերց կրակի տակ . . . էդ պահուն, քրդեր շլմորած «եամա՛ն Ալլա՛հ, թուշման կայ, ջան ֆիթայիներ լեռ ու սար պատեր են, ազատում չի՛ կայ մեզ, վալէլէ՛ր, վալէլէ՛ր . . . » կը պոռչըտային ու կը փախնէին :

ՊԵՏՕ.— Էհէ՛ . . . դոչախ տղերք, ձեր հոգուն մատաղ, ընա՛ էտպէս պէտք ա գազանների գլուխ տրորել . . . էսի կեանք ա, պապէ՛, էսիկ ապրի՛լ ա . . . :

ՀՕՏԱՂ.— Ես արանքից զըմէն կ'աչքէի, աղբերս ասեմ . . . մէկլէ ի՞նչ տեսնիմ . մէկանց կրակ դազարեց, տղերքն ասեա, մէկ մէկի յետեւից սարերն ի վեր բլաւե-ցին . յետուց իմցայ, էն ջահելների, մախաղմների սե-բաղդից, պաթրօն չի մնացել տղերց մօտ . . . Ախո՛ս եղաւ :

ԿԱՐՕ.— Ախպէր, էս դժո՞խք ա, ի՞նչ զըզըում ա՛-խայ Քրիստոնի հանգիստ չիկէ՞ էս սեւ աշխըրի մէջ . . . Աստուած լէ չի տեսի վերեւից . . .

ՀՕՏԱՂ.— Էլ չի դիմացայ . ասացի, ի՛նչ կ'եղնի թորկ եղնի, ես կը գնամ էնոնց մօտ . դուրս թոայ ծա-ռից, իջայ ձոր՝ յետեւի կողմից, վեր բանձրըցայ, զո՛րդ

մեր տղերց մօտ . . . : Որ զիս տեսին, ասեա խոզի ա-ռան, ասացին, « Լա՛օ, քէ՛ դուրպան, հոս մի՛ մնա, չո՛ւտ, գնա՛ Տէր Սարգսա գիւղ, ասա՛, գիւղի տղանե-րից լեռ բանձրըցողներ կան, թագնուամ են ու քաղցած, հաց առ բեր ուտինք . . . գիշերս մենք հոս չենք մնայ : »

ԿԱՐՕ.— Դո՛ւրպան, գնա գիւղ, ասա վարդօ բաճին, քէ հաց տայ, ա՛ն ու գնա՛ :

ՀՕՏԱՂ.— Աստուած կեանք տայ քէ, աղէ՛, մեռնի՛մ քիօ արեւուն . (խոնարհելով) մ'ացէք ի բարի . . . (Թաքու-լին կը մօտենայ, բուղբ մը կուտայ գաղտնի, եւ կամաց խօսելով) Թաթօ՛ ջան, էսա գիր քէ՛ խամար բերեցի . . . (Թաքուլ կ'առնէ բուլբը եւ ծոցը կը դնէ, եւ հօտալը կը մեկնի) :

ԿԱՐՕ.— (Նույն միջոցին ոտի վրայ ժուռ գալով, մեա-խոն) Տէ՛ր Սարգիս, Ռէ՛ս Մ'բաօ, աէ էս ի՞նչ բան ա, իրկիւունս մէկ հաւորներին հաւքենք, ճար՛մ տուշումիչ եղնինք . վատ բան ա էսիկ . . . ուէ՛հ . . . : (հօսքը Թաքուլի ուղղելով) հապա դու չե՛ս խօսա, տէրտրոջ տղայ . Նալօյի, Մուրօյի վրէ՞ կը հընհընա . . . (հերքոյ դառնալով) ապա դուք լէ բան չէք ասի էտոնց վրէ, Տէ՛ր Սարգիս . . .

Տէ՛ր ՍԱՐԳԻՍ.— Ի՞նչ ասել, օ՛րհնած, չէ՞ դու էլ գի-տես . . . բռնատուն տարան, մնացին էնտեղ ամսըներով, մկա էլ դուրս բերեցին մեռած : Ասացին հիւանդացել են ու մեռել . . . մենք լէ թաղեցինք պրծա . . . Աստուած խօզիներ լուսաւորի . . . :

ՊԵՏՕ.— Ըզորդ ա, ըմմա ի՞նչ ապով էին բռնատուն տարել . . . ախըր մա՞րդ մեոցրին, գի՛ւղ թալանեցին, ի՞նչ արեցին . . .

Տէ՛ր ՍԱՐԳԻՍ.— Էդ մարդ չիմցաւ, օրհնած, ո՛չ ի-րանք, ո՛չ իրանց քուլֆաթ, ո՛չ լէ մենք :

ՊԵՏՕ.— Հապա վաղ մեզ լէ իրար յետեւից բռնա-տուն տանն . . . ի՞նչ կ'եղնի, աէ՛րաէր . . . էսիկ դուլում

ա, զուլում, էսպէս ասարիլ չն՛ղնի... զիւղ թորկենք կուրպէթութան գնանք, ի՞նչխ անենք:

ՌէՄ ՄՐՏՕ.— Որ Ռէսի խօսք մտիկ անէին, էս զուլում չէր գայ ինոնց գլխին. չէ՞ ես ասացի ինոնց, էնիկ կայմագղամ ա՛, հօքմ՛ի տէր ա, պէտք ա զլու՛ւ ծաւ...:

ՏէՐ ՍԱՐԳԻՍ.— Խօ՛, ես ինչի՞ կ'ասեմ պէտք ա չաւրին առաջ գլուխ ծաւլ, Աստըծուն աղօթել որ փրկութեան դուռ՛մ բաց անէ մեզ:

ՊԵՏՕ.— Չէ՛, Տէր Սարգիս, բանն էսպէս չէ...: Չարին քանի գլուխ ծաւա, նա էնքէն լէ գլխիկ կը չոքա՛յ, մընչո՛ւր քէ տրորի... Լսի՛ր, աէ՛րտէր, քէ բան ասեմ. էնոնք քէ զարկեցի՛ն, դո՛ւ լէ զարկ. ախպերս ա սե՛մ, զարկես թէ չի զարկես, էն անօրէններ քէ կը մեռցնին... էլի ի՞նչ բանից վախենալ. որ ճղակոտոր կը մեռնեմ, լաւ է որ ես լէ զէնոնք մեռցնիմ, սատկեցնիմ, է՛նպէս մեռնեմ... ուէ՛յ՛...:

ՌէՄ.— Ախպէ՛ր, բոլոր էս խօսքերի ասցով ա մեր տուն կ'աւերի...:

ՏէՐ ՍԱՐԳԻՍ.— (Պետօյին ուղղելով) Օ՛րհնած, դո՛ւ լէ խեւացեր ես... որ ինոնց մէկ մազին դիպնաս, զըմ՛ մենքս լէ կը ջարդին, զըմ՛մեն թառուման կ'անեն, օջախներսի դարս ի վար կը դարձնին, կը մարին:

ՊԵՏՕ.— Մկա իմա՛լ կ'եղնի, աէ՛րտէր, ինոնց մաւրին որ չենք դիպնայ, մեզ չե՞ն ջարդի, մեր օջախներ չե՞ն մարի...: Չէ՛, Տէ՛ր Սարգիս, բանն էգպէս չէ՛, որ Աստուած կ'ասես...: Հէ՛, հէ՛յ... զուրպան եղնիմ էն զօջախ Ռափօյի ոտից հողին...: Էնիկ կ'ասէր, Աստուած ի մեզ խելք տուած ա, որ մենք մեզիկ չի պաշտպանի՛նք չարին դէմ, ոչխըրի նման գլուխ ծաւնք, Աստուած լէ կը հերատի, զերես կը դարձուցէ մեզնից... Ըզորդ էլ էսպէս ա, աէ՛րտէր:

ԿԱՐՕ.— (Հիւսցած Պետօյի նայելով) Ո՞ր մի Ռափօյի հա՛մար կ'ասես, կ'նքա՛ պապ... էն զօջախ վարժապետ...:

ըզորդ ա, էն կ'ասէր, էս իրայ Գրիստոնի տեսած զուլում և ո՛չ մի ազգ չի՛ տեսած... էսոր էլ սապապ կ'ասէր, մենք իրայ Գրիստոնէներս ոչխըրի պէս մարդեր ենք, մենք կուուել չենք զիննայ... Աստուածութէն որ Աղամհօր ստեղծեց, ասաց, աշխատի՛ր հաց ուտիս, զքէ պաշտպանի՛ր որ ասարիս ու ձիկ աղօթա... թէ չէ ես քո երեսին էլ չեմ հայի...:

ՌէՄ ՄՐՏՕ.— Տէ՛, ելի՛ք գնանք, օրն իրիկուն կ'եղնի, էս խօսքեր ուրիշ օրուայ թորկէք, էնոնք փոր չեն կշտացնի... կալերն ի մեզ կ'աչքեն... (աւնկեր ոտի կ'ելլեն):

ԿԱՐՕ.— Գնա՛նք, գնա՛նք, Ռէ՛ս Մրտօ, ըմմա մէկ լէ տուչունմիշ եղնինք, գնալ շա՛տ դուր ա, մեր հալն լէ քիչ եաման չի... Ըհա, վաղՄիբրդա բէկ լէ իր խօլամներք զիւղ կիգայ օչուր անալու... տէ՛, բան չունես, հա՛ հաց թխի՛ր՝ ուտին, գարի հացի՛ր՝ ձիանցը կերցնին... ախպէ՛ր, էս ի՞նչ բան ա... տէրութէն տուրք կ'առնայ, օչուր կ'առնայ, քուրա պէկեր տուրք կ'առնան՝ օչուր կ'առնան... տատի՛ր, բանի՛ր, էսիկ տի՛ւր բէկին, էսիկ խօլամներին, էսիկ սարթիյաներին, էսիկ կայմագղամին, էսիկ չըզիննամ ի՛նչ զըզլում պաղղայեա է կ'ասեն՝ կ'առնան, կ'առնան ու կ'առնան. Ըհա՛, էս տարի անձրեւ լէ չեկաց, հուռձքեր չորացա՛ն, կուացա՛ն... մե՛նք լէ չորացանք, կուացանք... վաղ լէ կիգան մէկանց զիւղ կի կոխան, կը թալանին, կը ջարդին, ջա՛նիլ աղջիներ կը խլին, կը տանա՛ն... պրծա՛ւ, չէ՛:

ՌէՄ.— Բան չեղնի, բան չեղնի, դիւք խախա՛նտ կացէք, Միբրդա բէկ խորտ մարդ ա: Ախըր ի՞նչ անել, որ ինոնք հօքմ՛ի տէր են...:

ԹԱԹՈՒԼ.— (Կես մը ոտի ելնելով) Էգպէս լէ կ'եղնի... որ էն զիւղ աղամարդ չիկայ, որ էնտեղ մարդիկ զէնք ի՞նչ ա չեն գիտենայ, էսպէս աշխատել դիտեն մի-

նակ, բայց իրանց իրաւունք պաշտպանել չեն գիտենայ,
էսպէս կը ջարդուեն, էսպէս էլ կը թաւանուեն... էլ ի՞նչ
կ'ուզէք որ եղնի... վա՛յ մեզ պէս սղամարդերի գլխին,
որ քօրզ կը գնին :

ՊԵՏՕ.— Ըղբորդ ա, ախպէ՛ր, մենք ՚կը տասնն՛ք,
մենք կը բանննք, էնոնք կը թաւանեն, կը տանեն, յե-
տեւեց լէ կը ջարդին... մենք մինակ էսպէս կը խօ-
տանք, կը տաքանանք, խոյի բան՛մ լէ չենք անի...
է՛է՛ . . . :

ՏէՐ ՍԱՐԳԻՍ.— (Քիչ մը բարկացած) Պապէ՛, էս
ինչե՛ր ա կ'ասէք : Դուք ըմէնքդ լէ Ասարծուն մոռա-
ցա՞ք . ձեր լուս հաւատ ուրացա՞ք . . . : չէ՞ ես կ'ասեմ,
կոյ Քրիստոսնի բան չեղնի . . . խամբերութէն կիանք
ա . . . : Որդի՛, մենք մեր պապերից ու տասերից էս-
պէ՛ս ենք տեսել, էսպէ՛ս լէ կը գնանք, է՛սպէս լէ լա-
ա : Տէ՛ դիւք գնացէք, Ասարծուն ազօթեցէք, ժամ պա-
տարագ մի՛ մոռանաք, Ասարծուն սղորմութէն անրաւ
ա . . . : (Դիւսկոր կը մեկնին) :

ԻՐԱՐՈՒ ԵՏԵԻԷ.— Մ'ացէք բարի, մ'ացէք բարի . .

ՏէՐ ՍԱՐԳԻՍ.— Բարո՛վ, հազա՛ր բարով, բարի՛
տանէք վըր ձեր կալերին, վըր ձեր աներին, վըր ձեր
քուլթաթին . . . : (Դառնալով իր որդւոյն) Արի՛, որդի,
մենք լէ գնանք մեր հէշան անել, օրն իրիկուն կ'եղնի :

(Թարուլ կը հետեւի հօրը, անձայն, անշունկ, գլխի-
կոր, միշտ մտազբաղ եւ դանդաղ քայլերով, կը մտնեն
կալը եւ դեզին ֆուէն մեկ մեկ երկմտեան կ'առնեն) :

ՔԱՀԱՆԱՆ.— (Յառաջանալով դեպի մեծ դեզը) Ո՛րդի,
արի՛, էս մեծ դէզ քակենք :

ԹԱԹՈՒԼ.— (Զայանակէ մղուածի պէս դեպ առայ
կը նետուի այնպիսի շարժումով, որ կարծես փորձել ու-
զէր արգիլել հայրը որ մեծ դեզին չմտնայ) (մեկուսի)
Ի՞նչ անել . . . որ գէնքեր տեսնի՞ . . . (բարձր) Հա՛յր,

լաւ չե՞ դնի էս պղտիկ դէզ աւարտենք, էնպէս մեծին
անցնենք . . .

ՔԱՀ.— (Կես մը զայբացկոս) Որդի՛, դու գիտես զիմ
խօսք խօսք ա, ես չեմ սիրեր որ ձիկ հակառակ խօսեն . . .

ԹԱԹՈՒԼ.— (Մեկուսի) Անկարելի պիտի ըլլայ հա-
կառակիլ, ի՞նչ անել, թո՛ղ փոթորիկ պայթի, ի՛նչ կ'եղ-
նի, թող եղնի (բարձր) էգպէս էլ թող եղնի, պապէ՛ . . .
(կը մօտենայ մեծ դեզին հօրը հետ) :

(Սոյն միջոցին հայր եւ որդի կը մխրեն երկմտեանե-
րը եւ միաժամանակ մեկ մեկ խուրձ կը բարձրացնեն :
Տէր Սարգիս ապա՛մ ու սարսփահար, ջղածիզ շար-
ժումներով ետ կը ֆաշուի, իսկ որդին անսարբեր եւ պայ-
քող փոքորիկի մը առջեւ կանխապատասխան դիմելով, եր-
կուէն ալ խուրձերը օդին մէջ տարբեր, առանց կարո-
ղանալ ու խօսիլ) :

ՔԱՀ.— (Լռութիւնը խզելով, սարսփած) Տէ՛ր . . . ,
ե մի տանիր զմեզ ի փորձութիւն . . . (սասիկ սահ-
մուկած կը ձգ խուրձն ու երկմտեան, ետ ետ կը ֆաշուի
վախով եւ ջղածիզ պրկումներով, եւ այլը չի կրնար հե-
ռացնել բացուած խոռոչէն : Յանկարծ, մերք այլերը խո-
ռոչին, մերք Թարուլին) Աստուած անիծե՛ր ա մեզ . ի՞նչ
բան է այս . . . օձեր բո՞յն են դրի Տէր Սարգսա կալին
ի մէջ :

ԹԱԹՈՒԼ.— (Տակաւին երկմտեանը՝ խուրձը ծայրին՝
բարձր բռնած, անշարժ, ալ անաւոր կեցուածով եւ
փառասակող աչքերով կը դիտէ հայրը, եւ հետալով) Չէ՛,
պապէ՛, Տէր Սարգսի կալին մէջ օձեր բոյն չեն դնի . . .

ՔԱՀ.— (Զգուշութեամբ ոտներուն ծայրը կոխելով,
յամբ յամբ կը յառաջանայ կրկին դեպի դեզը, կը ծռի
եւ հետուէն կը դիտէ խոռոչը, աչքերը խոռոչ խոռոչ բա-
ցած եւ ակնապիշ) Ա՛յլ փրկեա՛ զմեզ ի չարէն . . . (շուն-
չը բռնուած յուզմունքէն, գլուխը վեր բարձրացուցած ա-

սեն ձօրը եւ զաւելին նալուածները իբար կը հանդիպին, մին սարսափած միւսը համարձակ : Խոռոչին մեջ արեւի շողերուն սակ մէկ քանի հրացաններու փողերու փայլիլը տեսնելով եւ ձեռքը մեկնելով դեպի խոռոչը, սեղմուած ծնօցներուն մեջէն կը գոչէ)... Իտ՞նք... դո՞ւ... (բերանը կես մը բաց, չկարենալով շարունակել խօսքը, ձեռքերը միեւնոյն դիւրիւն մեջ անշարժ) :

ԹԱԹՈՒԿ. — (Հպարտ, անվեհեր կեցուածով եւ կտրուկ) Ե՛ս... :

ՔԱՀ. — (Միտ սարսափահար, կես սպառնական, ձեռքերը բացած դեպի Թարուկ երկարելով) Սատանա՞նք զկապեց, որդի՛, խեղճքի թուա յանկարծ, (աչքերը երկիւնջ յառելով) թէ Աստուած անիծեց զքեզ լէ, զիմ օջախ լէ :

ԹԱԹՈՒԿ. — (Քիչ մը յուզուած) Պապէ՛, ո՛չ սատանան կապեց զես, ո՛չ խեղճքի թուա, և ո՛չ էլ Աստուած անիծեց մեզ ու մեր օջախ... :

ՔԱՀ. — Ապա խմա՞լ էդ ըմէն բաներ ընկան Տէր Սարգսոյ կալին... : Աշխըրի մէջ էլ տեղ չիկա՞ր... : ո՞ր մի սատանան իրատեց զքեզ... :

ԹԱԹ. — Հա՛յր, դու տեսա՞ր էն դէմքեր... :

ՔԱՀ. — Ո՞ր մի դէմքեր... :

ԹԱԹ. — Տեսա՞ր Մուրօյի, Նալօյի՛ էն առիւծի պէս աղաների դէմքեր... :

ՔԱՀ. — (Միամտաբար, առանց հասկնալու թէ ինչո՞ւ կը յիշեցնէ անոնց դեմքերը, եւ ձեռքերը կես մը բանալով) Հա՛... տեսա՛յ, երկու մեծերի դէմք. ինոնցմէ առաջ էլ շատերին նմ տեսել, այսուհետեւ էլ կը տեսնեմ ուրիշներ ո՛չ մէկ աղամորդի անմահ է... :

ԹԱԹ. — (Յուզումնալից, երկու ձեռքերը պարզած) Հա՛յր, մեռե՛լ էլ կայ, մեռել էլ... : Այս երկուսը մեռած չէին :

ՔԱՀ. — Ապա ի՞նչ էին... Չէ՞ բանաստից էնպէս մեռած բերեցին... :

ԹԱԹ. — Այո՛, բանտիցը բերին, բայց էնտեղ մեռած չէին :

ՔԱՀ. — Դու ի՞նչ կ'ասես, որդի՛ :

ԹԱԹ. — Նայեցի՞ր դէմքերին : Էնտեղ կը խօսային, և ես լսեցի էնոնց ասածները, երբ բուրվառ կը ձգէի եւ կեղեցուն ի մէջ... : Էնտեղ բաներ փախացին և ես խօսակցայ... : Եւ ի՞նչպիսի բաներ... (ձեռքերը բազկասարած վեր վար շարժելով) վա՛յ ինոնց, որ չեն լսի... :

ՔԱՀ. — (Ընդհատելով, վշտահար եւ ապշահար) Ա՛յ, որդի՛, քոտանամ, ի՞նչ եղաւ քէ, գժուե՛լ ես, որդի՛ :

ԹԱԹ. — (Հետզհետէ յուզուելով եւ բարբոսելով) Ո՛չ, պապէ՛, քո որդին չէ՛ գժուել, լսի՛ր ինձ : Էնտեղ ինձ ասացին, հրացաններ ա՛ն և սո՛ւր ամենքին, ո՛վ գլխին կը ծածկի քօթի մի կտոր, ո՛վ կնիկ չէ, ո՛վ իր կրծի տակ սիրտ ունի, և սիրտի մէջ արիւն... :

ՔԱՀ. — (Միտ ապշահար) Ինչե՞ր կ'ասես դու, որդի՛ :

ԹԱԹ. — Կ'ասեմ, ե՛ս տոա էս դէմքեր... ե՛ս, քո որդի՛ն, Թաթ՛ուկ... : Անիծի՛ր ինձ, քո որդուն, եթէ կամենաս... : Հօր անէծք զարհուրելի՛ է, բայց այս մեր վիճակն էլ անուշ չունէ... (յուզուած եւ հրացայ նայուածով ժուռ կուգայ. մի փոքր լուրբիւն) :

ՔԱՀ. — (Շուտաւ ու վշտաբեկ, բայց մի քիչ հանդարտ՝ տեսնելով իր զաւկի յուզումները) Ես չեմ անիծի քէ, որդի՛... : Ես չեմ անիծի իմ որդուն... : Իմ շըրթներից անէծք չի՛ դուրս գայ, այլ միայն աղօթք... : Հիմի էլ կ'աղօթամ զքեզ և ողջ աշխըրի համար (ձեռամբարձ, աչքերը երկիւնջ յառած կը մըքմըքայ) :

ԹԱԹ. — (Հետզհետէ աւելի յուզուած ու բարբոսուած) Աղօթք, միշտ աղօթք... : Պապէ՛, Աստուած չի՛ սիրիք բոլոր էն մարդեր, որ միայն աղօթել գիտեն և ոչխըրի

04504



պէս չեն կարող ինքզինքնին պաշտպանել...: Թէ կ'ուզես Աստըծուն հաճելի լինել, պապէ՛, չարին առաջ գլուխ մի՛ ծռի. իժի գլուխ ստիցդ ներքեւ արորի՛ր և էն ժամանակ միայն աղօթի՛ր, փառք տուր Աստըծուն: Դուն այն ասա ինձ, ինչի՞ ծառայեց քո աղօթք, երբ անօրէններ կը փչրէին Նալօյի ատամներ բանտի մէջ...: Երբ կը փետէին էնոնց արտեւանունքներ, կը ջարդէին էնոնց յօնքեր... (Երկու ձեռքերը սպառնազին շարժելով եւ վեր վեր բարձրացնելով, յետոյ ուժգնօրէն եւ յանկարծ ազ ձեռքը դիպի հետուն պարզելով) Մնացած գուք զնացէք բանտի պատերից հարցրէք...: Եւ այժմ էլ գու լսեցիր, չէ՞, հարեւան զիւղի թալան...:

ՔԱՀ. — (Միտ ձեռամբարձ եւ շուարուն) Մեղայ, տէ՛ր, մեղայ, ի քեզ յուսացայ տէր, և մի՛ ամաչեցից յաւիտեան...: Որդի՛, ևս կ'աղօթամ, գո՛ւ լէ աղօթիր:

ԹԱԹ. — Ո՛չ, հայր, ո՛չ, ևս էլ չեմ աղօթի, գո՛ւ էլ մի աղօթիր...: Այս ձեռք, երբե՛ք, էլ երբե՛ք բուրվառ չի ձգի, այլ զէնք պէտք է բռնի, արի՛ւն պէտք է թափի, արի՛ւն...:

ՔԱՀ. — (Միտ շուարուն ու ապահար) Արի՛ւն... (կրկին ձեռքերը բարձրացնելով) Հայր, թո՛ղ դոցա, զի ո՛չ գիտեն զի՞նչ գործեն...:

ԹԱԹ. — (Շարունակելով) Այո՛, հայր, այսուհետեւ աղօթքի փոխարէն ևս էսպէս պիտի գործեմ...: Վրէժ, արեան փոխարէն արի՛ւն...: Եւ եթէ այս հաճելի չլինի Աստըծուն, ևս կը բողբեմ էնոր զէ՛մ անգամ... բայց զխոցի՛ր, հայր, որ նա էլ էսպէս կ'ուզի. կ'ուզի որ չարին գլուխ արորինք... չարը իժն է, իժը սատանան է, և սատանան Աստըծուն հաճելի չէ:

ՔԱՀ. — (Որդին կը դիտէ ակնապիտ, դողահար ու սարսափած) Լռի՛ր, որդի՛, լռի՛ր... հոգուդ մեղք կ'ստես...:

ԹԱԹ. — (Միեւնոյն դիւրի մեջ) Դու կը հրաժայես որ լռեմ, պապէ՛, բայց ևս կը դռնեմ բոլոր ուժովս թէ մի՛նչեւ մենք մեր կեանք, մեր պատիւ չպաշտպանենք մեր սուրով, երկնից արդարութիւնն չի պէտք է սպասենք: Եւ ևս համոզուած եմ մեղաւոր մենք ենք, յանցաւոր մենք ենք, ո՛չ թէ ձեր հասկացած կերպով, այլ տնոր համար որ, մենք անասուն ոչխարներ ենք, մենք մեզ պաշտպանել չենք զիտեր...: Աղօթքդ, պապէ՛, եթէ մեր հոգեւոյ փրկութեան համար է, զէնքն էլ մեր մարմնոյ փրկութեան համար է: Այս կեանք՝ որ մեզ Աստուած աւանդ տուեց, պէտք է պաշտպանենք. և ևս վստահ եմ որ, էն ժամանակ երկնքն էլ կ'օրհնի իմ ձանապարհ, և Աստըծուն էլ հաճելի կը լինի իմ սուրբ գործ... (հառաչելով ժուռ կուգայ):

ՔԱՀ. — (Պան մը լուռ իր որդին դիտելէ յետոյ, հանդարտ, այլ գոռ ու սիրական ձայնով) Լսի՛ր ինձ, որդի. ևս ձեր եմ և հալւոր. ևս փորձուած եմ, բայց դու ջուհիլ ևս ու անփորձ, և քո խօսքեր չարի թիկադրութիւններ են: Իցայ Քրիստոսն էն նման է էս ժուռին. անօրէններ փոթորկներ են, որ կ'անցնին էնոր կատարից, տուանց կարենալ զէն շարժելու, խախտելու. հանգիստ եղիր դու, որդի՛, և աղօթիր միայն Աստըծուն:

ԹԱԹ. — Է՛ն, ների՛ք, հայր, որքան էս ժողովուրդ իր լաց ու կոծով ձանձրացուց Աստըծուն...: Չեր աղօթքին հետ զէնք տուէք քիչ մ'էլ էնոր ձեռք, որ այսուհետեւ էլ իրբև մարդ ապրի, ու փոխանակ լաց ու կոծով աղօթելու, Աստըծուն փառաբանելով աղօթի...:

ՔԱՀ. — Որդի՛, լռի՛ր, լռի՛ր, դու կը զատանցես...: Դու չես գիտենայ ինչեր կ'ասես:

ԹԱԹ. — Ո՛չ, հայր, ո՛չ, ևս չեմ զատանցի. ևս միայն կ'ասեմ, որ քո աղօթքի հետ էս ժողովուրդի կրուուել սովբեցուցէիր, քո Աւետարանի կողքին խաչի քով

էլ մի սուր գնէիր և է՛նպէս համբուրել տայիր, էս ժողովուրդ կը դառնար իր հաւատով աւելի զօրաւոր, կը դառնար Տարօնի առիւծ, և էս անդամներ էլ կը զողային անկից...

ՔԱՀ.— Երայ Քրիստոսնի հաւատք երկըթի հաւատք ա, էն ս՛րքան իր սուրբ հաւատով ամուր մնայ, էնոր քա՛ն չեզնի: Սուրբ խաչ էնոր կը պահպանի ամենայն փորձութիւնից: Զէնք ի՞նչ ա, կռիւ ի՞նչ ա. էս բաներ զըմմէն չար սասանի գործեր են: Դու հանդիսա կա՛ց, որդի՛, և ապաւինիր միայն Աստըծուն... (ձեռները դողդոջուն դեպի խոռոչը երկարած եւ ձայնը կամացցնելով) Հանց էս բաներն էլ էս գիշերիս է՛նպէս անյայտաջրիւր որ, աշխրբի մէջ ո՛չ մի հողածին չի լսի քո ոտնածայն անգամ...:

ԹԱԹ.— (Տիրական եւ հաստատ, ձեռները կուրծքին խաչաձեւ) Որ էդպէ՛ս, հանց էս գիշեր ես կը հեռացնեմ զէնոնք: Բայց լսի՛ր, պապէ՛, որ ինձ էլ երբե՛ք չես տեսնի...:

ՔԱՀ.— (Պաղատագին) Որդի՛, քէ՛ զուրպան. լսի՛ր քո հօր խրատին, մի՛ դատարկիր քո պապերի օջախ...:

ԹԱԹ.— (Առանց ուշ դնելու) Այո՛, ես կը գնամ, կը գնամ, պապէ՛, Նաւօների, Մուրօների վրէ՛ժ լուծելու: Ես կը գնամ էնոնց մօտ, որոնք ինձ պէս ուխտաւորներ են, և իրանց կեանք մատաղ դրած հայրենիքի փրկութեան և իրանց եղբայրներ ու քոյրեր ստրկութեան և անպատուութեան այս զազիր շղթաներէն ազատելու նուիրական և սուրբ գործին... (շուտփոյր կը մեկնի):

ՔԱՀ.— (Ձեռները պարզած, իրանը դեպ առաջ՝ որդւայն կողմը կհամ, պաղատագին) կա՛ց, որդի՛, զուրպան, կա՛ց... (ծունկի կուգայ եւ ձեռամբարձ կ'աղօթէ) Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քուս...:

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻՋՆԷ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.



(Տեսարանը միեւնոյնն է. — Կես գիշերը վաղուց անցած է. լուսինը ժայռի վրայէն մայրը մեկնելու վրայ է):

ՏԵՍԻԼ I

ԹԱԹՈՒԼ (Առանձին)

(Մտազբաղ եւ անհամբեր ժուռ կուգայ կալին շուրջը, մերթ րնդ մերթ աչքերը դեպի լեռները կը յարե) Կէս գիշեր վաղուց անցաւ, և տակաւին երեւան չեկան... Արգեօք բա՛ն՝մ պատանեցաւ... Թալանող քրդերի՞ հանդէպեցան, ի՞նչ եղաւ: Դա ստակալի բան կը լինի... (վայրկեան մը առանց խօսելու մտազբաղ ժուռ կուգայ) Ես կը մտածէի էդ դժբաղդ Մուրօյի և Նաւօյի վրէ՛, բայց այժմ էլ Մշկաչէն գիւղի ալան թալան կը կանգնի մեր աչքերու առաջ, քստմենիլի և սրտածմլիկ անաւորութեամբ... Ի՞նչ բան է այս... Ինչո՞ւ այս ժողովուրդ չի սթափիր և չուզեր ինքզինք պաշտպանել...: Են՛ զճ, դժբա՛ղք ժողովուրդ, որ ծնրաչոք քո բազուկներ տարածած, քո աչեր լեռներու սարեր յարած, դարերէ ի վեր կը հարցնես՝ « Ո՛ւտո՞ի եկեղեցին յօգնութիւն իմ... »: Ոտքի՛ ել, ո՛վ ժողովուրդ, սթափի՛ր, քո փրկութիւն քո բազուկների միջոցաւ կուգայ քեզ...: Օտարների վրայ մի՛ յոյս գնիր... զէ՛նք բռնիր այդ բազուկներով և պաշտպանիր քեզ...: Որ պիտի մեռնես, նախ զա՛րկ, մեռցո՛ւր, ապա դու էլ քաջերա՛ւ նման փառաւոր մահով մեռիր... էդպէ՛ս, ոչ ոք կը դիպնայ քեզ, ոչ ոք կը թալանի քեզ,

ո՛չ ոք կ'առեւանգի քո պատիւ, ո՛չ ոք էլ կը համարձակի ոտնակոխ արորեւ քո հաստալիքներ, քո սրբութիւններ: Մի՛, մի՛ այդպէս գլուխ ծռիր ստրուկի նման... քալի՛ր, արիւնի ճամբէն քալի՛ր, քամբազդ ժողովուրդ, քո փրկութիւնն հո՛ն է... : (Սոյն միջոցին բուի սուր նիչ մը կը լսուի, Թաքուլ կը ցնցուի եւ վեր՝ դեպի լեռներ կը նայի) Դա՛ ոչինչ, «բայդուշն» իր որսի յետեւից կը լարի ու կը ճչայ... և ո՛չ մի կապ ունի մարդկային ճակատագրի հետ... (կրկին ականջ կը դնէ) Բայց թերեւս կարգախօսն է...

ԼԵՌԱՆ ՄԷՋԷՆ ԶԱՅՆ ՄԸ.— Ո՞վ է դա...
ԹԱԹ.— (Հրացանը պահաւած լով) Մա՛ն...
ԶԱՅՆԸ.— (Միտք վերեկն) Ազատութիւն... :

2

ՆՈՅՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒԿԱԿԱՆՆԵՐՈՒ ԽՈՒՄԻՒ ՄԸ

ԹԱԹ.— (Ուրախացած) ԻՉէ՛ք, իՉէ՛ք, չէ՞ ես ձեզ կ'սպասեմ անհամբեր... (դեպի ձայնը կ'ուղղուի, որ միջոցին լեռնէն կ'իջնեն 15-20ի չափ խոււք մը երիտասարդներ, ուսանք գիւնուած հրացաններով) Բարո՛վ, հազա՛ր բարով, մահու և ազատութեան անձնուրաց ընկերներ... (ձեռք կը բոքվեն):

ԽՈՒՄԻՒ.— (Թաքուլի ձեռքը բռնած) Ի՞նչ լուր, Թաթուլ, ի՞նչպէս են անից, տէրաէ՛ր, երէցկի՛ն, Զարո՛ն

ԹԱԹ.— Էնտո՛ք լա՛ւ են, Ռաիօ... էսօր Մուրօն ու Նալօն էլ թողեցինք...

ԽՈՒՄԻՒ.— Խեղճ աղերք...

ԽՈՒՄԻՒ.— Եւ մենք կ'երթանք անոնց արիւնի ճամբուն վրայ, իրենց արդար վրէժ լուծելու... : Դու ա՛յն սաս ինձ, Թաթո՛ւլ, ո՞ւր են զէնքեր, անվաաս հասցրի՛ն... (ամենքը բոլորուած մտիկ կ'ընեն):

ԹԱԹ.— Այո՛, ա՛ն հո՛ս են (խոսողը ցոյց ցալով, որան վրան ծածկած էր) զիչերն ամբողջ հակեցի էնտոն Վրէ՛... :

ԽՈՒՄԻՒ.— Շտապե՛նք մի քիչ, քանի տակաւին զիչեր է, ելնե՛նք լեռ. մանաւանդ այժմ շատ գործեր ունինք տեսնելու... : Պէտք է այդ անօրէններէն վրէ՛ժ լուծել, մեր նպատակ հետապնդել... : Որ պիտի մեռնի՛նք, առիւծի պէս մեռնինք, ալե՛րք: Մեռնի՛նք, բայց զանոնք ստակեցնելով մեռնինք. ա՛յս պիտի լինի մեր ուղղութիւն... : Դու ա՛յն սաս ինձ, Թաթո՛ւլ, տէր-պապդ չի տեսաւ զէնքեր, չէ՞... :

ԹԱԹ.— Ինչպէ՞ս թէ չի տեսաւ : է՛նէ՛, թէ հոս լի-նէի՛ք... : Վախեցաւ խեղճ մարդ, սարսափեցա՛ւ երբ տեսաւ : Ախրը շատ էլ կռիւ արեցինք... անօրո՛ւտ, ի՛նչ որ տես, նա իւր համոզումից ետ չի դառնայ... : է՛ն-քան տաքացանք, է՛նքան տաքացանք, որ ես էլ գլուխս առի ու քնեցի... այլեւս զիւղի մէջ մնալ ինձ անհնար է. անպայման պէտք է ես էլ լեռ բարձրանամ ձեզ հետ :

ԽՈՒՄԻՒ.— Այդ լա՛ւ կը լինի, Թաթուլ, բայց մեր ծրագրերն... : Դու կը տեսնես, այս գազաններ կատաղեր են . մէկմէկի յետեւից զիւղեր կը թալանեն, կը դատարկեն : Ամեն կողմ ոճիրներ կը գործուին, օրից օր մեր վիճակ կը վատթարանայ... : Ախրը դու լսեցիր Մչկաչէնի թալան, չէ՞... :

ԹԱԹ.— Այո՛... հոտաղ ամէն բան պատմեց մեզ : Բայց թէ ի՛նչ կ'ուզէին էտ անօրէններ, ի՛նչ պատճառ կար որ էտպէս վիրան դարձուցին զիւղ... :

ԽՈՒՄԻՒ.— Խո՛, ի՛նչ կ'ուզես որ լինի... Օմար աղէն մէկ շաբաթէ ի վեր իր խօլամներով, միւլթազիմ իր սափթիյաններով եկած, զիւղի վրէն նստած, մին հարկ կը հաւաքէ, միւսն էլ տասանորդ... :

ԹԱԹ.— Չէ՞ որ դարնան հարկ հաւաքեցին. յետուց,

Օմար արդէն ի՞նչ բանով հարկ հաւքել կ'իւլէ...

ԽՄԲԱՊԵՏ.— Մուտիր պաշտօնանկ եղած է կ'ասեն, գայմագլամ էնոր անդ Գիւրտ Օմար զրկած է, ձեռքը գրելով, հարկ հաւքելու: Կռիւն էտ տեղաց է սկսած արդէն: Գիւղացիներ էլ կ'ասեն թէ տակաւին գարնան իրանց հարկ վճարած են, հիմի ի՞նչ կ'ուզեն: Իբր թէ, Պօլսից խտուր հրաման եկած է, պաղլայա ըսուած վաճառմար յետամնաց հարկեր հաւքելու...: Գիւղացիք որ ասես, կը ճշան, կը բողոքեն, բայց ո՞վ կը լսի, էտոնք բռնի կը գրաւեն, ինչ որ գտնեն: Անասուն, կահ կարասի, ի՞նչ գիտնամ...: Միւսնոյն ասեն էլ, ի հարկէ, ձեռք, արիւնհեղութիւն, բռնաբարում...: Գիւղ արդէն պէկի խօղամներով լեցուած էր. չերկարեմ, ստիթիաներ կը մանեն խեւ իրաչերի տուն, մին կը բռնի ըկան եզի եզջլուրից, ուրիշ՝մ կը վազի հարսի յետեւից...: Է՛ն, խեւաչեր էլ չըլմանայ, համբերութիւն կը հատնի, աչքեր կը գառնայ, մէկ շուրջ կը նայի, յանկարծ կը նետուի ստիթիոյսի վրէ, ոտիցը տակ կ'առնէ, զարմարալ մ'է կը բրդի...: Էլ կռիւ ծայր կուտայ, կը տարածուի տանիցը դուրս... մնացած դու գիտես արդէն...:

ԹԱԹ.— Այժմ ի՞նչ կը մտածէք անել...

ԽՄԲԱՊԵՏ.— Արիւնի ճամբէն գնալ, մեր նպատակ հետապնդել, առանց ընկրկելու, առանց դատաւիք լինելու Մեռնի՛նք պիտի, բայց նախ պիտի մեռցնենք... արիւնի՛ փոխարէն արի՛ւն, և հատ մ'ալ աւելի. վրէ՛ժ պիտի լուծենք. յետոյ ցոյց պիտի տանք այս զժբաղլ ժողովուրդին թէ՛ խողաղութիւն սուբով կը պահպանուի... (սոյն միջոցին սուրբ պատեանքն կը հանէ և դեպի վեր կը բարձրացնէ) թէ սուրը խողաղութիւն խորհրդանիշն է, թէ չի բաւեր միայն գատիլ, աշխատիլ, այլ այդ աշխատութեան պտուղ վայելելու համար, առիւծնուրու պէս իր թաթ անոր վրայ պէտք է դնել... թէ մե-

զուն անպամ իր սուգած մեղրն իր խայթոցով կը պահպանէ. բայց այս զժբաղլ ժողովուրդ սխալ ըմբռնումով, մեղք չի գործելու անհիթնիթ երկիւղով, ո՛չ միայն իր տասանք ձրխակեր գող աւաղակներու կը յանձնէ, այլ և ի՛ր պատիւ, ի՛ր կեանք, և կը թողու որ իր սրբութիւններ, իր հաւատաւիքնիր ոտնակոխ լինին...: Օ՛ն, թաթով, զէնքեր դուրս հանեցէք...: Օգնեցէ՛ք թաթուլին, ընկի՛րներ... (սակեմը թարուլի ետեւն կ'երբան դեզին մօտ, և զեմեր և Տ փոքր սնուկներ դուրս կը բերեն):

ՏԱՄՆԱՊԵՏ.— Ո՛ւր էր թէ այս փամփուշտներ երէկ մեր հետ լինէին, մենք շուտով կ'ազատէինք էն ջահիւններ անօրէններին ձեռքից...: Ախպէ՛ր, բաղլն էլ էնոնց կը ժպտայ...:

ԽՄԲԱՊԵՏ.— Է՛ն, ի՞նչ անել...: Մտուկները ժայռի յետեւ փոխադրեցէք ու դարձէք... (Տ հոգի սնուկները լեռ կը հանեն և պան մը վերջը կը վերադառնան) Անո՛նք որ հրացան չունին, պէտք է առնեն մէկ մէկ հատ... (հրացան չունեցողներ կ'առնեն): Մօտեցէ՛ք այժմ, ո՞վ իմ անձնուրաց ընկերներ, յանուն մեր տառապող եղբայրներու, անարպուած քոյրերու, պէտք է երդնո՛ւնք մեր զէնքերու վրայ... մօտեցէ՛ք և պարզեցէ՛ք ձեր սուրբ և ծայրերը զետին՝ իրա՛ր միացուցէք... (կիսաբոլորակաձև կը շարուին և սուրերնին մերկացնելով, ծայրերը գետին մեկ կեհի վրայ կը միացնեն):

ԽՈՒՄԲԸ ՄԻԱԶԱՅՆ.— Կ'երդնո՛ւնք յանուն մեր նուիրական սրբութիւններուն, որ մեր արեան մինչև վերջին կաթիլ պիտի թափենք...:

ԽՄԲԱՊԵՏ.— Այո՛, իմ անձնուրաց ընկերներս, երդո՛ւմ յանուն մեր տառապեալ և բազմաչարհար հայրենիքին:

ԱՄԵՆՔԸ ՄԻԱԶԱՅՆ.— Կ'ուխտե՛նք, ալեւոր Մաախ վիւ՛յ, նուիրել մեր արեան մինչև վերջին կաթիլ...:

ԽՄԲԱՊԵՏ.— Ընկերներ, չի՛ բաւեր միայն խօսքով ու խոս գնել և երգնուլ... Խօսքը պէտք է գործքով իրականացնել : Գործքով իրականացնելու համար, պէտք է ձեր ամբողջ էութիւն անոր գաղափարով կլանուի, ձեր ամբողջ մտածում անոր վրայ կեդրոնանայ, ձեր ամբողջ երեւակայութիւն անով պէտք է աշխատի... ամե՛ն ժամ, ամե՛ն վայրկեան, մեր նահատակներու, չարչարուած և չարչարուող եղբայրներու և քոյրերու ուրուականներ ձեր աչքերու առջև պէտք է կենան, սպառնազի՛ն, վրէժն իրենց չրթունքներէն կախուած, այրո՛ղ, շանթահարո՛ղ հրաբորբոք լեզուներու պէս... Այո՛, դարեւոր վրէ՛ժ... անո՛վ պէտք է նոյնանանք, անո՛վ հմայուինք, անո՛վ հիքնսանանք... :

ԽՈՒՄԲԸ ՄԻԱԶԱՅՆ.— Կ'երգնու՛նք... վրէ՛ժ... :

ԽՄԲԱՊԵՏ.— Մենք Գողգոթայէն պիտի իջնենք, մեր կոնակ անոր դարձնելով, երեսնիս էլ վրէժի ուղ-մաղաչախին, և խաչ փոխանակ կոնակնիս շալակած, անոր ծանրութեան տակ ընկճելու, տրորուելու, մեր սուրին (ձեռքով ցոյց կուսայ) պիտի դատակենք և պիտի բարձրանանք սէգ Սիփանայ սարեր . ողջոյն պիտի տանք ալեւոր Մասիսին, ողջոյն մ'ալ մայր Արաքսին... : Եւ իբրեւ հայրենավրէժ հայկազուններ, հո՛ն, կիկլոպներու պէս վրէժի շանթեր պիտի դարբնենք և փայլատակենք մեր ոխերիմ թշնամիներու գլխուն. մեր դարբնոցներէն մահացան հրեղէն մրրիկներ պիտի յարուցանենք և մեր թշնամիներ աի մը աճիւնի պէս պիտի ցրուենք... :

ԽՈՒՄԲԸ.— Անէ՛ծք, մահ թշնամիին... :

ԽՄԲԱՊԵՏ.— Եւ այն ատեն, այլակերպութիւն մը պիտի կատարուի Թիեզերքի վրայ. արեւը մայրը պիտի մտնէ, լուսինը պիտի խաւարի, և կապոյտ երկնակա-մարին վրայ, մեր Հայկ նահապետ՝ համատեղութեան այլափոխուած, հայրենավրէժ գիւցաղնի մը պէս, հորի-

զոնէն բարձրանալով, իր աճարկու աղեղէն վրէժի սուր սլաքներ պիտի արձակէ թշնամույն գլխուն : Արեւաբա-լից գէպքեր իրար պիտի չզլթայուին . ալեւոր Մասեաց խառնարանէն հրեղէն կիկլոպներ դուրս պիտի գան, ա-նոր վրէժի սլաքներ առյաւէտ վերանորոգելու համար... : Երբ, վարէ՛ն, այս մարտիրոսացած, նահատակուած ժո-ղովուրդի սրտէն ելած անէ՛ծքներ, մինչև երկինքի կա-մարը բարձրանալով, սեւ սամպերու պէս պիտի դիզուին, կուտակուին, և աճողնաղբոք պայթիւնով վրէ՛ժ պիտի գոսան և կարկուտի պէս թշնամույն գլխուն պիտի տե-ղան... (սոյն միջոցին ամպ կը գոռայ եւ խուլբիկ վրա-յին սարսուռ մը կ'անցնի) Ե՛ւ, ուշադրութիւնս . այն ա-տեն մեր նահատակներն ալ իրենց վերեզմաններէն դուրս ելլելով ամենքը մէկէն վրէ՛ժ, վրէ՛ժ, յաւիտենական վրէ՛ժ պիտի գոսան... (խմբագետք խօսած պահուն սու-րբ շարունակ աչ ձեռքով վեր եւ հորիզոնաձեւ բռնած, խուլբիկ դիմացը կը շարժի) :

ԽՈՒՄԲԸ ՄԻԱԶԱՅՆ.— Վրէ՛ժ, վրէ՛ժ... :

ԽՄԲԱՊԵՏ.— Եւ ահա՛ այն ատեն, այս խումբը յան-կարծ լէգէտներու պիտի փոխուի. ՀԱՅ ԿՈՒՆԻԸ մեր հաւատքի հանգանակը պիտի դառնայ, ՀԱՅ ՎՐԷՅԻՄ մեր ուխտը : Ա՛յդ ուժով, ա՛յդ կամքով հայրենիքը պիտի ձերբազատուի, և մե՛նք, մեր Տապանակ Ուխտին ուսամ-բարձ, ընդառաջ պիտի գնանք Վերածնող Հայրենիքին, որ զարնանածաղկի մը պէս, մասմաքուր, սպիտակ ձիւ-ներուն մէջէն, արիւնի ճամբուն վրայ, արեան ճաղա-ղիքներէն դուրս կ'ընծիւղի, դողդոջուն, այլ հրաշա-փառ... : Արեւելեան աստղը այն ատեն երկինքի կապոյտ կամարին վրայ, Մասեաց զագաթէն պիտի երեւի, փա-ռաւոր և լուսաշո՛ղ, վերածնող հայրենիքին վրայ խա-զաղութեան և երանութեան շողեր արձակելով, որոնց մէջէն մեր հոգիներ հրեշտակներու պէս մանկական պա-

բեր բռնելով, պիտի խայտան, պիտի երգեն... « փանք
ի բարձունս և յերկիր Հայաստան խողաղութիւն » . բայց
իրենց յանկերզը պիտի ըլլայ մշտապէս վրէժ... վրէժ,
յանուն մեր եղբարբազ հայրենիքին, վրէժ յանուն մեր
նահատակ հերոսներուն, վրէժ յանուն խաչուած Հայ
ազգին, վրէժ յանուն մարտիրոսացած Հայ ժողովուր-
դին... վրէժ, յաւիտենակա՛ն վրէժ... :

(Սոյն միջոցին կրկին ամպ կը գոռայ եւ իսկոյն ետե-
ւի վարագոյրը բացուելով, կը տեսնուի հետեւեալ կեն-
դանի պատկերներու տեսարանը) :

(Մէջտեղը պատուանդան մը, վրան ձգուած ալէծալ և
արիւնաթաթախ ծածկոց մը, որուն կեդրոնը գարնանա-
ծաղկի ճ խոշոր դեմնամած փառաւոր տերեւներ (խոր-
հրդանշող ճ նահանգներ), բոլորովին ցանցընուած ծա-
ղիկներ . տերեւներու մէջտեղէն բարձրացած նրբամար-
մին ՎԵՐՍՄՇՆՈՂ, ՀԱՅՍՍՏԱՆ, սպիտակ շղարչներու մէջ
պարուրուած, հերարձակ, ոտքին հազած տրիսի ներբան,
որուն զանկապանները խաչածիւ փաթաթուած մինչև
սրունքները կը հասնին : Մէկ ոտքը պատուանդանին
վրայ, միւսը պատուանդանին ետեւի կողմի երկրորդ
աստիճանին վրայ : Կտրծքը զարգարուած է ուսընդա-
նութ ձգուած հոսպոյն ժապուէնով, վրան վից շողո-
ղուն աստղերով (խորհրդանշող ճ նահանգներ) : Աջ ձեռ-
քը սուր մը՝ ծայրը գետին յեցած, միւս ձեռքը՝ ձեթե-
նի ձիւղ մը վեր բարձրացուցած, որ կը խորհրդանշէ
« խողաղութիւնը սուրով » :

Երկու քովը մէկ մէկ հրեշտակներ . մին՝ կէս ծունկի
վրայ դրոշակ պարզած, միւսը նոյնպէս ծունկի չոքած,
առատութեան եղջիւր մը ձեռքին՝ հակած վերածնող
Հայաստանի ոտքերուն :

Պատուանդանին առջև ցած սեղան մը, որուն երկու
կողմը ծունկի չոքած երկու փոքր հրեշտակներ, մին

բռնած է սափոր մը, որ կը պարուենակէ նահատակներու
արիւնը . միւսը բռնած է նոյնպէս սեղանին վրայ դրուած
խնկաման մը, որուն մէջէն թեթեւ մուխ մը կը բար-
ձրանայ. ամբողջութիւնը կը խորհրդանշէ հայրենիքի
ազատագրման համար զոհուող նահատակներու արեան
և աճիւններու նուիրագործումը :

Վերածնող Հայաստանի աջ և ձախ կողմերը զոյգ մը
յիշատակարաններ, զարդարուած ծաղկեպսակներով և
նուիրուած մին նահասակ Հայ Հերոսներուն եւ Ազատու-
թեան Ռաւմիւրաններուն, միւսը Մարտիրոսացած Հայ ժո-
ղովուրդին :

Վերածնող Հայաստանի և նահատակներու Յիշատա-
կարանին մէջտեղը, հայր ու աղայ, հայրը քրմապետի
տարագով, աղան հրեշտակի ձեռով, հայրը (ցեղին ոգին)
ոտքի կանգնած, իսկ սրդին կէս ծնրաչոք, մէկ ձեռքով
վանան մը բռնած, վրան գրուած ՀԱՅ ԿՈՒԻԻ. միւս ձեռ-
քով՝ հորմէն կ'ստանայ նետուաղեղ մը և նետեր, խոր-
հրդանիշող՝ ցեղի սրդին հայկուիւր կը կտակէ իր սերուն-
դին :

Պատուանդանին միւս կողմը և Հայ մարտիրոսացած
ժողովուրդի Յիշատակարանին մէջտեղ մայր ու աղջիկ.
մայրը քրմանուշի տարագով, իսկ աղջիկը միշտ հրեշ-
տակի ձեռով, երկուքն ալ, մազերնին ցիրուցան, խոժո-
ւաղէմ, հրացայտ աչքերով. աղջիկը կէս ծունկի եկած,
մէկ ձեռքը դրոշակ մը, վերտառուած Ման կամ Ազատու-
թիւն բառերով, միւսով մօրը ձեռքէն կ'առնէ ջահ մը,
որուն ծայրը ուրբատածե բարակցած և բոցեղէն գոյնով.
կտրծքը ամբողջ զինուած սլաքներով, կը խորհրդանշէ
ցեղին կամքը, որ ցեղին վրեժը կ'աւանդէ իր սերունդին :

Կոնակը դէս ու դէն ցրուած շիրիմներ, որոնց քովը
պատանքաւոր սերուականներ. Խրիմեան, Պատկանեան,
Բաֆֆի, Քրիստափոր, Արխանեան, Զաւարեան, Շաքէ
մանկիկը գրկին, Սրուանձտեանց, Լն. Լն. :

վերածնող Հայաստան արշալուսային ճատագայթներով ողորդուն Ամպ գոռացած միջոցին վարագոյրը վեր կ'ելէ, ամեն կողմէն վրէժի ձայներ կը գոռան. ըստերէն, վտանին տակէն, յիշատակարաններուն մէջէն, ուրուականներէն, վարագոյրը մ'ինչեւ վեր ելած աստն ամպը երեք անգամ ընդհատ ընդհատ կը գոռայ) :

ԽՈՒՄԲԸ.— (Սահմուկած ձեռներին բացած եւ դէպի ետ կ'համ կ'աղաղակեն) Տեսի՛ր... տեսի՛ր... :

ՏԱՄՆԱՊԵՏ.— (Միեւնոյն միջոցին) Խորհուրդ մեծ և սքանչելագործ... :

ԽՄԲԱՊԵՏ.— Լուսթի՛ւն... ի ծո՛ւնը... ի ծո՛ւնը մեր սրբութիւններուն առջեւ... (ամենք իսկոյն մեկ կարգի կը շարուին, երեսնին դէպի տեսարանը, մեկ ծունկերին գետնը, կես ծունկի եկած ձեռով, հրացաննին աջ ձեռներին բռնած, բունը գետնը՝ դէպ առաջ կը խոնարհին) :

ԽՄԲԱՊԵՏ.— Ոտքի՛ ելէք... ի կա՛րգ աջ և ձախ... (խուլքը երկուքի կը բաժնուի, կեսը աջ եւ կեսը ձախ կողմը կը շարուին, բեմին երկայնութեանը) Իսկ դո՛ւք, տասնապետ, առա՛ջ անցէք և ողջո՛յն տուէք մեր նուիրական սրբութիւններուն... (զինուորները շարքի կանգնած միջոցնուն հրացանը երկու ձեռով բռնած՝ դէպի վեր, նակասնուն կը կոթնցնեն) :

ՏԱՄՆԱՊԵՏ.— (Կես մը ժողովուրդին դարձած, կես մը տեսարանին) Ողջո՛յն և համբո՛յր սրբութեան վերածնող Հայաստանին... :

Ողջո՛յն և համբո՛յր երախտիքի մեր անձնագորհ նասատակներու նուիրական յիշատակարանին, որ Հայ-կուրը կը նուիրագործէ... :

Ողջո՛յն և համբո՛յր եղբայրութեան, խաչուած և մարտիրոսացած Հայ ժողովուրդի աճիւնափակ տապանակին, որ Հայ-վրէժը կը մարմնացնէ... :

Ողջո՛յն և համբոյր ուխտի, Յեղին խորհրդաւոր Ուրին, որ Հայ-կուրը կ'աւանդէ իր սերունդին... :

Ողջո՛յն և համբոյր նուիրման, Յեղին անյողողդ կամքին, որ Հայ-վրէժը կը կտակէ որդոց որդի :

Ողջո՛յն և համբոյր յարգանքի և հիացման, Հայ Ազատագրութեան աստուածարեալ ռահլիրաններուն, Մխիթար Արքային, Աբովեանին, Պատկանեանին, Նալբանդեանին, Արծրունիին, Բաֆֆիին, Խրիֆեանին, Ալիշանին, Սրուանձտեանցին, Պէշկիթաշեանին, Իզմիրեանին, Գրիստափորին, Ժիրայրին, Արևանեանին, Զաւարեանին, Եփրեմին, Շաքէին և բոլոր այն մեծ ռահլիրաններուն, որոնք Հայ Ազատագրութեան և զաղափարի ռազմադաշտին վրայ ինկան, Սրբանայ սէզ սարերուն վրայ հնչեցնելով մարտագոռ ՀՆԶԱԿը, պարզելով ազատութեան արիւնագանդ ԴԲԾԱԿը, այժմ յոյսով կը ննջեն անմահութեան քունը, բայց մոռնող անզուսպ առիւծներու պէս իրենց շիրիմներէն վրէժ կը գոռան (ամպ կը գոռայ եւ կրկին վրէժի ձայնը ամեն կողմէն) :

ԽՄԲԱՊԵՏ.— Յարգանք իրենց յիշատակին... :

ՏԱՄՆԱՊԵՏ.— (Շարունակելով) Ողջո՛յն և համբոյր օրհնութեան և խրախոյսի, վերածնող Հայաստանէն, նաստակ հերոսներէն ու ռահլիրաններէն դէպի Հայ ռազմադաշտը, մեր անձնուրաց կամաւորներուն՝ Անդրանիկին, Վարդանին, Համօյին, Տրօյին, Քեռիին և բոլոր Հայ Ազատագրութեան, Հայ փառքը բարձրացնող ու պանծացնող Հայ կամաւոր առիւծներուն ու կորիւններուն... :

ԽՈՒՄԲԸ ՄԻՍԱԶԱՅԵ.— Փառք և անմահութիւն իրենց... :

ԽՄԲԱՊԵՏ.— Սուրբնին հատո՛ւ, կապարնին մահացո՛ւ... :

ՏԱՄՆԱՊԵՏ.— (Շարունակելով) Հո՛ւակ, ողջո՛յն և համբոյր ցաւատանջ եղբայրութեան և յոյսի, դէպի Հայ

տառապանքը, դէպի եղերաբազդ մարտիրոսագիր հայու-
թիւնը, որ նոր Գողգոթայէն սրտակեղեք աղաղակներով
վրէ՛ժ կը դռայ և վրէ՛ժ կը կտակէ մեզ... (ամպ կը
գոռայ եւ վարագոյրը դանդաղութեամբ կ'իջնէ):

ԽՄԲԱՊԵՏ.— Ի ծո՛ւնը, ի ծո՛ւնը... (ամենքը նա-
խորդ ձեռով ոսփի կուգան) Ռաքի՛ ելէք այժմ... Օ՛ն
ա՛նդր, յառա՛ջ, դէպի ձեր ուխտը, ձեր դաշինքը, ձեր
երգումը:

ՏՍՄՆԱՊԵՏ.— Այո՛, դէպի մեր ուխտը, մեր դա-
շինքը, յանուն մեր սրբութիւններուն, բոլոր մեր հին
և նոր նահատակներուն արեան վրէժը լուծելու, մանա-
ւանդ ուխտենք այդ վրէժը ցեղային ժառանգութիւն
զարծնել և փոխանցել զայն որդոց որդի մեր 7 անգամ
77 սերունդներուն...:

ԽՄԲԱՊԵՏ.— Քիչ ատենէն արշալոյսը կը ծագի, ար-
ծիւները պէտք է բարձրանան դէպի սարերը...: Օ՛ն
ա՛նդր, տանապե՛տ, ձե՛ր խմբի զլուխը...:

ՏՍՄՆԱՊԵՏ.— Ի կա՛րգ, ընկերներ, աջ և ձախ
(խուժքը երկուքի կը բաժնուի եւ կը կենան, հրացաննե-
րու բուեր ձախ կողմէն գետին յեցած եւ ձախ ձեռով
փոկերէն բռնած):

ԽՄԲԱՊԵՏ.— (Երկու քայլ առաջ անցնելով կ'սկսի
երգել, իսկ սասնապէս արինգով կը ձայնակցի) .

ԱԷԳ ՍԻՓԱՆԱՅ ՍԱՐԵՐ

Լօ՛, լի՛, լօ՛, լօ՛, լօ՛... Սիփանայ սէզ սարի վերայ,
կարիճներ շտապով գալիս են — միանում,
Այն սեղ անմահ որդիք անյաղթ հակայ լերան,
Զէնք ու զրահի են ընթանում: (Կրկնել):
— Ինչո՞ւ վառում են, զինում,
Սանձարձակ ձի հեծնում անհամբեր,
Քանց Սիփանայ պինդ քամին՝

Սըլանում են դէպի ցած, դաշտի մէջ է թշնամին:
— Նա է վառում նրանց վրէժ անմոռաց,
Աճեղ կռուի մէջ վատ թշնամին,
Հասու սուսեր է հանել, ցեղապետին սպանել,
Նա է վառում քաջերին:
— Բոլոր ցեղն այժմ ոտքի է կանգնած՝
Թշնամուն ընդդէմ, մահու մարտի է կանչում,
Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում
Եւ թշնամին պարտւում՝
Թողնում փախչում սարէ սար,
Յետ է ձրգում մեծ տար: (Կրկնել):
— Լօ՛, լի՛, լօ՛, լօ՛. Արիւն վաթիցին, արիւնի փոխան՝
Արիւն խմեց ծարաւի սուսեր.
Նրան յաղեցած՝ դրեցին պտտեան.
Ելնում են հիմայ սէզ Սիփանն ի վեր.
Սէզ Սիփանայ կանաչ գլխին.
Յաղթող ցեղն անում է մեծ խնդում,
Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն է երևում,
Էլ չի գայ մեզ մօտ թշնամին,
Սուր սեռու մեր պողպատին: (Կրկնել):

(Խմբապէսը սոյն երգը երգած միջոցին պէտք է սուրով
եւ շարժումներով երգին կենդանութիւն տայ):

ԽՈՒՄԲԸ ՄԻՍՍԻՆ.— Հազա՛ր ապրին մեր խմբա-
պետ և մեր տանապետ...:

ՏՍՄՆԱՊԵՏ.— (Միկը մեջը դնելով եւ սուրը պար-
զելով) Օ՛ն անդր, յառաջ. հրացան ուսերնիդ (խուժքը
խսկոյն հրացանները ուսերնին կ'առնեն): Ի կա՛րգ, ի
զո՛յգ (զոյգ զոյգ իրար ետեւ կը շարունակ աչէն ձախ իրար
միանալով) Օ՛ն, դէպի լե՛ռ, դէպի վե՛ր, ա՛րիւնի ձամ-
բէն... մե՛ր վրէժի սլաքները զարբնելու... (խուժքը կը
սկսի երգել հետեւեալ երգը, բեմին օրջանը ընելով զին-

ուտական քայլերով, եւ միեւնոյն ասեմ կը բարձրանայ լեռ) :

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չը կար, մութ զիշեր էր,
Մի խումբ կ'երթար արագ-արագ,
Տեսանք որ քաջ իրանին խումբն էր,
Զինուած էին բոլոր նրանք :

2

Կեանքերը ազգին նուիրած,
Կտրիճ իրանն առաջն ընկած՝
Գնում էին դէպի սահման,
Թռչում էին կրակի նման :

3

Հրացանները ուսերնին
Դըրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ-զուարթ,
Ազատութիւն երգում էին :

4

Անցնում էին մութ անտառով,
Ամեն մէկը առիւծ կտրած,
Նըմոյգ ձիանց վըրայ հեծած
Մերկ սուսերը փայլակելով :

(Երգուած միջոցին ասանապետը սուսերամերկ խումբին առջեւէն, իսկ խմբապետը նոյնպէս սուսերամերկ խումբին ետեւէն լեռ կը բարձրանան եւ կ'անյայտանան սարերու ետին, միտք երգելով, եւ վարագոյրը կ'իջնէ : Վարագոյրը իջած ասեմ, սակաւին երգելու ձայնը կը լսուի խորեւէն) :

ՎԵՐՋ Բ. ԱՐԱՐՈՒԱԾԻՆ



ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

(Ժայռը բեմին ձախը . աչ կողմը Տէր Սարգիսի ասնը պատը, մեջտեղը դուռ մը) :

ՏԵՍԻԼ 1

Տէր ՍԱՐԳԻՍ. — (Ցանկապատին մէջ ծնրաչոք եւ ձեռամբարձ կ'աղօթէ արժասուագին) Տէ՛ր, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինչն... (Բիշ մը լուռ, միտք ձեռամբարձ եւ աչերը երկինք կը մերմրբայ, միայն շքրուցները կը շարժին, յետոյ Բիշ մը բարձր) Պահապա՛ն ամենայնի, Քրիստո՛ս Աստուած մեր, աջ քո հովանի լիցի ի վերայ մեր, ի առէ՛ և ի զիշերի... Ազատեա՛ զմեզ ի փորձութեանց զիւաց... և (աւելի բարձր) ի մարդո՛ց անիրաւաց... և սղորմեա՛ քո արարածոց և ի՛նձ բազմամեղիս... (Երկու ձեռով կուրծքը կը ծեծէ արժասուագին, յետոյ կրկին ձեռամբարձ)... մեղա՛յ, տէ՛ր, մեղա՛յ, քաւեա՛ զիս յանօրինութեննէ յիմմէ... (լռին կ'աղօթէ, աչերը վեր կիսախուփ) :

2

ՆՈՅՆ ԵՒ ԵՐԷՑԿԻՆ

ԵՐԷՑԿԻՆ. — (Տանը դռնէն գլուխը մտնելով, ապա ծեծելով կը դիտէ քանդանգը եւ մեկուսի) Էս ի՞նչ բան ա, կ'աղօթա՞, ի՞նչիս կ'ենէ տէրաէր էս պահու... (կամաց կամաց սեմեակ կը մտնէ եւ կը

մօտենայ տեսնոյ) Տէ՛րաէր, կարգիւ մատաղ, կ'աղօթա՞ս, կ'ըլա՞ս, ի՞նչիս կ'եղնես էս մութ ճոխի պահուն . . . :

ՔԱՂ.— (Սարսափած ետին կը նայի, երեցկիներ տեսնելով փութով ոտքի կ'ելնէ) Տէ՛, գիւ ի՞նչի՞ զարթեցար, կ'նի՛կ... աէ՛ գնա պատկիր, պատկիր, Աստըծուն պատիժ զիմ վրէ հասել է... Երկնաւոր Աստուած էս խոզիս աննա՛, ու չի տեսնի՛մ... (կուրծի կը ծեծէ) չի՛ տեսնիմ, Աստուած, զիմ աղջկա՛ն, զիմ Զարօյի՛ն . . . (ձեռքերը երեսին կ'արտառէ) :

ԵՐԷՅԿԻՆ.— (Շուարած) Դիւ ի՞նչ բան կ'ասես, տէր-աէ՛ր, ես չե՛մ խտականայ :

ՔԱՂ.— Որ խտականո՞ս ի՞նչ կ'եղնի, կ'նի՛կ, Աստըծու պատիժ մեր վրէ ինկել ա... (հասկլխալով) Բէ՛գ, Զարօյի՛ն կ'ուզի... թէ չէ՛, կ'ատէ, գիւզ կ'աւերիմ, կրակի կիսամ... (ձեռքերը մազերուն մեջ կը խօթէ) Օ՛Ք...

ԵՐԷՅԿԻՆ.— (Տեղէն սարսափահար ցատկելով) Վո՛ւյ, քոռանա՛մ չի տեսնիմ... վո՛ւյ, խլանամ չի լսի՛մ... էս ի՞նչ բան ա կ'ասես, տէրաէ՛ր... (ձեռքերը գլխին զարնելով, մեկ հոս մեկ հոն ժուռ կուգայ խենդեցածի պէս) Վո՛ւյ... վո՛ւյ... մէրէ՛, էս ի՞նչ կը լսամ... ի՞նչ անեմ... ո՞ր մէկ ջուր ընկնեմ... Եամա՛ն Աստուած, էս ի՞նչ հող տուիր զիմ գլխին... (միտս մեկ հոս մեկ հոն երթալ գալով) :

ՔԱՂ.— Կ'նի՛կ, չե՛մ գիտնայ, չե՛մ գիտնայ ի՞նչ անենք. ճար չկայ. անօրէն գազան կ'անի, ի՞նչ որ ասի էս խինդ օր ա մեր գլխի վրէն չոքած, շան պէս կ'ուտի, կը խմի՛, կը շնթոկայ, քէֆ կ'անի... հիմի էլ աղչին կ'ուզայ... Օ՛Ք, օ՛Ք... Էնքան աղչեցի, էնքան մըղկըտացի, էնքան արիւն-արատուք թափա, ձեռքեր պագայ, ոտներ պագայ... Օղուտ չիկայ, կ'նի՛կ... Խօ՛, չե՛ս տեսնի, Աստըծուն օր խատմ ոչխար կը գննուի էտ կուռօնների հըմար . . . Էլման գիւզացիք զուլ-զուրպան

կ'եղնին... էլ ի՞նչիս անել... օ՛Ք, Աստուած (արտառազին) . . . է՞ս լէ մեր մեղքից ա . . . չը գիտնամ . . . Մեղա՛, երկնաւոր տէր, քո ոգորմութէն հասցիր . . . (ձեռքերը բացած կ'աղօթէ երեցկիներ խօսած պահուն) Տէ՛ր տէրանց, Աստուած աստուածոց, Աստուած յաւիտենական, Աստուած երկնաւոր, լո՛ւր, ձայնի իմում . . . :

ԵՐԷՅԿԻՆ.— Եամա՛ն, տէ՛րաէր... Խօ՛, էն ջանքը զըմէն օր քէ կ'ատէր՝ գիւ չէիր լսայ . . . էս զալըմների առջ չի՛ պէտք ա գլուխ ծալ . . . քանի՛ ծոսա, էնքան լէ գլխիդ կը չոքան . . . Սո՛ւրբ արիւմէր (բազկիստարած) ձեռքսի քո փէշի՛դ եմ գցել... գի՛ւ ճարմ արա... վո՛ւյ, վո՛ւյ... մկա խեղացս կ'եղնիմ... (էիջ մը լուռ, յանկարծ) էսպէս չե՛ղնի, տէ՛րաէր, էսպէս չե՛ղնի. ես պէտք է գնամ զիմ ձեռք սատկեցնեմ էն գազանին . . . որ չի տեսնեմ զիմ ջանքի, զիմ աչից լուսի սեւ օր . . . :

ՔԱՂ.— Կ'նի՛կ, գիւ ի՞նչ կ'ասես, էլմա՛ն գիւզ կը կոտորին... մեր օջախներ զարսի վար կը դարձնին . . . Լօի՛ր, կ'նի՛կ, խըլխուեն ձիկ մէկդի քաշաց, սկընջիս բանն՛ր փախաց էդ գազան... (ձայնը կամացցնելով, գուլահար) Բանն՛ր... թէ... նորից հօ՛քմ կայ... կոմանջօներ ֆլաններին թալանի՛ն... կոտորի՛ն... (ձեռքերը գլխին) էս սկընջիս խլանայի՛ն չի լսէին... Մեռնիմ քէ, Աստուած (ձեռքերը վեր) էս ի՞նչ Բրիտանի մեղք ի՞նչ ա, որ էսպէս կը շարչրկի... մեղա՛, տէ՛ր, մեղա՛ :

ԵՐԷՅԿԻՆ.— Տէրաէ՛ր, աղօթալով, մղկտալով ճարմ կ'եղնի՛ . . . Արի՛, փախնենք գիշերով, տէրաէ՛ր... փախնենք սարէ սար... գնանք Մոսկովիս երկիր . . . :

ՔԱՂ.— Երեցկի՛ն, հոգս՛ւզ մատաղ, մի՛ խեւնայ... որ փախնենք, ողջ գիւզ կը շարչրկին... յետի տարօք մեղաց տէր կ'եղնինք . . . :

(Սոյն միջոցին սանը դռնէն կը տեսնուի Ջարօ, սարսափահար, յուզուած եւ բորբոքած ներս կը նետուի : Հագած է միայն գիշերազգեստ ներմակ շապիկ, մազերը ուսերուն ցիրուցան, որոնց ծայրերը կոնակէն ուսերը կը շոյեն) :

ՆՈՅՆՔ ԵՒ ՉԱՐՏՈ

ՉԱՐՏՈ.— (Յուզուած ձայնով եւ շուտափոյթ դէպի ձնոգէր յառաջանալով) Վո՛ւյ, պապէ՛, վո՛ւյ, մօրէ՛, էս ի՞նչ ձիւն կիրայ զիմ գլխին... (տօր փաքթուելով, կ'սկսի արտասուել) Դուք ի՞նչ զուլում կը խօսաք... :

ՔԱՀ.— (Այլալլած) Աղջի՛, ինչի՞ ես էտպէս վախեցել... տէ՛, դնա՛ պառկիր, քնի՛ր, խորո՛ւ... բա՛ն չի կայ, բա՛ն չի կայ... :

(Երեցիկը երկու ձեռքը գլխին զարնելով ժուռ կուգայ) :

ՉԱՐՏՈ.— Ի՞նչպէս թէ բան չիկայ, պապէ՛, ես չեմ քնած. ի՞նչ որ ասացիր, ես իմցայ... էս գազան բէգ զիս կ'ուզայ, չէ՞... սեւաւո՛ր գլուխ... (երկու ձեռքը գլխուն կը զարնէ) էս ի՞նչ զուլում աչխար՞ է... էս ի՞նչ անիրաւ մարդկութիւն է... էս կեա՞նք ա... էս ապրի՛ւ ա... ինչի՞ Աստուած հոգի տուեց մեզ, որ էտպէս զո՛ւլմ ու տարտի մէջ պիտ'ապրենք... :

ՔԱՀ.— Որդի՛, հոգուդ մեղք մ'անի, մի՛ արտնջայ Աստուծուն դէմ... :

ՉԱՐՏՈ.— Պապէ՛, պապէ՛, դու ի՞նչ կ'ասես. դու կ'ուզես որ էս գազանի առաջ ընկնեմ իրա՞ն գնամ, որ հողուս մեղք չանեմ... վո՛ւյ, չը տեսնի՛ էս սեւ օր էս սեւաւո՛ր գլուխ... ես զիս կ'սպանիմ, էս սեւաւոր գլուխ կը ջախջախիմ, էն գազանին չեմ կապի, չեմ կապի... :

ԵՐԷՅԿԻՆ.— (Աղջկան մօտենալով, լալագին) Մի՛, մի՛ հերտտիր, զուրպան... (աղջիկը փոխի իրեն կը սեղմէ) ձիկեա՛րսի կը խոցաս... զիմ աչի՛ց լոյս... :

ՔԱՀ.— Դո՛ւրպան, ես չեմ ասի գլուխդի կապիս էս գազանին... հապա Աստուծուն դէմ արտունջ մի՛ անի... :

ՉԱՐՏՈ.— Պապէ՛, պապէ՛... (տօր փոխելով եւ յուզուած) Դու ա՛յն ասա ինձ, ո՞ւր է թաթուլ... ո՞ւր է զիմ եղբայր... Պէտք չէ՞ր որ նա այժմ հոս ելներ, և զիս պաշտպանէր... Իւր քրոջ պատիւ բարձր բռնէր, ու էն գազանի ձիրաններին չի մատնէր... Այս իմ սեւ օրին ո՞ւր է թաթուլ... ասա՛, հա՛յր, ասա՛. ինչի՞ էդպէս լուռ կը կենաս... ինչի՞ թորկեցիր որ գնաց :

(Այս միջոցին երեցիկը բարի մը վրայ նստած կ'արտասուէ) :

ՔԱՀ.— Որ գիտենայի՛, որդի... :

ՉԱՐՏՈ.— Որ էդպէս ա, հա՛յր, էլ ես ոչի՛նչ չուենեմ էստեղ... ախպէրս զիս թորկե՛ց գնաց... հայրս բան՛մ չէ կարող անել էս զազապին, Աստուած էլ մեզ թողներ ա յիրեսի վրէ... ես կը մնամ անտէ՛ր, անտիրակա՛ն... էլ ինչի՞ ապրիլ, Աստուած, դու չե՞ս տեսնիր վերեւից յո՞ր է քո արդարութիւն, յո՞ր են քո վրէժի շանթեր... (Բիչ մը լուռ, յետոյ յանկարծ) էտպէս չե՛ղնի, պապէ՛, էս գլուխ պէտք ա դնիմ ջաղցի քարի տակ արորիմ, որ ես չի ջախջախիմ էն գազանի գլուխ... (յուզումնալից եւ աչ ձեռքը նետուն երկարելով) և թո՛ղ արարա՛տ-աչխար՞ էլ տեսնի թէ, Հայ աղջիկ առիւծի ինչպիսի մատա՛կ ա... է՛ն... (յօնքերը պոստած, աչ ձեռքը պարզած եւ կոխած, ժուռ կուգայ) :

ՔԱՀ. — Որդի՛, հերի՛ք, հերի՛ք, Աստըծուն արատնջ անել մե՛ղք ա... մահացո՛ւ մեղք, Աստուած չի՛ ներիր. բոլոր էա խօսքեր Աստըծուն հաճելի չեն, զո՛ւրպան... :

ՉԱՐՕ. — (Միտ լուզուած) Ի՞նչ, հա՛յր, դու ի՞նչ կ'ստես, ես չեմ հասկանայ... Դո՛ւ կ'ուզես որ Աստըծուն հաճելի լինելու համար, աղջիկներ իրանց պատիւ էա անդգամների, էա խննդներ հաճոյքի՞ն զո՞նեն... : Մեղք չգործելու համար, ոչխարի պէս գլուխ ծռանք ու ջարդուե՞նք... : Էսպէս աատինք, էսպէս աշխատինք ու էսպէս զուլմ ու տարտե՞ր քաշենք... : Է՛ն, ո՛չ, պապէ՛, ո՛չ, Աստուած երբե՛ք էսպէս բան չի՛ տէր... : Ա՛խ, օրհնեա՛լ լինի, հազա՛ր անգամ օրհնեալ լինի պարոն Ռափայել, որ մեղ էս բաներ սորվեցուց, մեր աչեր բաշեց :

ՔԱՀ. — (Երկու ձեռքերը իրար միացուցած ու գլուխն ի վեր բարձրացնելով) Դո՛ւրպան, լռի՛ր... : Ների՛ր, Աստուած... Զսնի՛լ ա, անիո՛րձ ա... :

ՉԱՐՕ. — (Շարունակելով եւ անուշալիբ հօրը ըսածներուն) Այո՛, պապէ՛, այո՛, մեղ սովրեցուց թէ սխալ է ձեր քարոզած... թէ Աստըծուն հաճելի լինելո՛ւ համար, մարդ պէ՛տք ա իր անձ պաշտպանի... թէ Աստուած վատերին, թոյլերին չի՛ սիրիր... թէ Աստըծուն հաճելի լինելու համար, աղջիկներ պէտք ա իրանց պատիւ բարձր պահին արժիւններու բոյներու պէս, խննդներին անմատչելի բարձրութեան հասցնեն... : Եւ զո՛ւք չի հասկացաք, չի՛ հասկացաք, պապէ՛. դուք կարծեցիք թէ այդ պատուական մարդ անաստուածութիւն կը քարոզէր, անհաւատ էր, հեթանո՛ս էր... Դուք այդպէս կարծեցիք ու դուք մեղք գործեցիք, մեղանչեցի՛ք :

ՔԱՀ. — (Չարհուրած, երկու ձեռքով ականջները զոցել ուզելով) Որդի՛, որդի՛, լռի՛ր, Խայ Քրիստոսնի բերնին էսպէս խօսքեր չի վայլի... : Դու մեր տան վրէ սեւ կը

բերիս, Աստըծուն անէժք կը բերիս վըր մեր գլխին... (աչեքը վեր) :

(Երեցիկներ արատուելով սանը դռնէն ներս կը մտնեն) :

ՉԱՐՕ. — Ա՛ն, պապէ՛, պապէ՛... Աստըծուն անէժք դուռ պի տան է, Աստըծուն զագապ մեր գլխին է չոգեր, դու տակաւին չե՛ս հասկանայ... :

ՔԱՀ. — Որդի՛, դու ի՞նչ բաներ կ'ստես... էսպէս քո սուրբ հաւատ ուրանալու համա՞ր կարգալ զնացիր... վա՛յ ինձ, որ ես չէի խտականայ... : (Ձեռքեր բարձրացնելով եւ գրոս նայուածով) Էտո՞նք բոլոր չարի թեւադուրբիւններ են, խորո՛տ, գնա՛ աղօթի՛ր Աստըծուն, ապաշխարի՛ր որ թողութէն գանխ :

ՉԱՐՕ. — Պապէ՛, ես իմ սուրբ հաւատ չե՛մ ուրացել, և երբե՛ք էլ չարի թեւադուրբիւնների ականջ չեմ կախել... : Լսի՛ր ինձ, պապէ՛, ես որ դպրոց զնացի, Հայրիկայ Վանգուծ, Հայրիկայ Հայգուծ կարդացի, և աւելի ամբացայ իմ հաւատքի մէջ : Ես կարդացի Ռաֆֆիի զըրքեր և ես դարձայ մի մատակ աւել : Այո՛, հա՛յր, ես կարդացի Հայրիկայ զըրքեր, և ես տեսայ որ, Հայրիկ անհաւատութիւն չի՛ քարոզէր. նա սո՛ւրբ մարդ էր, մե՛ծ և ճշմարիտ Հայ քրիստոնեայ... : Նա հայրապետական աթո՛ռ բարձրացաւ, և դու կ'ստես էլի՛ չարի թեւադուրբիւններ... :

ՔԱՀ. — Չարո՛, մեռնիմ քէ, ես չեմ ասի Խայրիկ չար թուղթ գրած ա... Մեղա՛յ Աստըծուն, հազա՛ր մեղաջ... : Բայց ես չեմ խտականայ, տէ ի՞նչ բան ա քո ասած Վանգուծ, Հայգուծ. ես կը խտականամ զիմ Աւտաւրանից, զիմ աղօթից... :

ՉԱՐՕ. — Ափո՛ս, պապէ՛, որ դու չե՛ս հասկանայ... : Ես կարդացի էք զըրքերի մէջ, և հասկացայ թէ, հա՛յր, Աստուած կ'ուզէ որ խաչդ սուրին դաստակ սուզիս, առնես ձեռքդ և էք զազանի գլուխ ջախջախիս, քո տան

պատիւ փրկելու համար... (բանանան սահմուկած, ակնապիւ, ձեռներ կես մը վեր առած եւ կես մը բանակը ծռած աղջկը կը դիտէ) Այո՛, հայր, այդ սուրը ձեռքդ առնես, ժողովուրդիդ գլուխ անցնես եւ անոնց իրաւունքը, կեանքը եւ պատիւ պաշտպանիս...:

ՔԱՀ.— (Միեւնոյն դիտելն մեջ) Ե՞ս... ես մեղաւորս ... ե՞ս, ի՞նչ քրիստոնէս արի՛ւն թափեմ...:

ԶԱՐԹ.— Է՛ն, պապէ՛, էլ ի՞նչ բան կ'ուզես որ ասեմ քե՛: Որ դու էն գրքեր կարդացած լինէիր, կը տեսնէիր թէ քէ պէս քահանաներ վարդանայ կողքին ի՞նչպէս կուր բռնեցին, խաչը սուրին դատակած, զա՛րկին, զա՛րկուան, արի՛ւն թափեցին, եւ դու պատարագիդ մէջ էնոնց կը յիշես սուրբերու կարգին...:

ՔԱՀ.— (Աչքերը խոռո խոռո բացած, ձեռները դողալով) Է՞ն... էնո՞նք... ե՞ս...: Ո՛չ, զա՛ւրպան, արիւն թափել մե՛ղք ա... դու ի՛նձ լսիր...:

ԶԱՐԹ.— (Յուսալեւում եւ յուզուած) Է՛ն, պապէ՛, որ դու կը վախենաս արիւնի ձամբէն քարելու, որ է՛լի կը թերհաւատիս, որ չես հասկանայ ճշմարտութիւն, քո պարտականութիւն, մե՛ղք քո վզին, ահա ես էլ կը գնամ, լեռ ու ձոր, սար ու ժայռ ոտիցս տակ կ'առնեմ, մինչեւ գտնիմ թաթուլ, Ռափայել. էնոնք կը պաշտպանին իրանց քոյր, իրանց քրոջ պատիւ, Հայ աղջկայ պատիւ՝ իրանց սուրով, իրանց արխնով... (սանը պափսիս փակեմ շուրջս կ'անցնեսանայ):

ՔԱՀ.— (Անապարանոց ետեւն վազել կ'ուզէ) Զարո՛... զա՛ւրպան... կա՛ց, սպասի՛ր... (սոյն միջոցին երեցկիներ ներս կը մտնեն):

ԵՐԷՅԿԻՆ.— Վո՛ւյ, քոռանամ. ի՛նչ արեցիր, տէ՛րտէր, տո՛ր գնաց զիմ աչից լուս... Զարո՛, քէ՛ մատաղ, արի՛ (երկուք մեկանց Զարոյի ետեւն կը վազեն) արի՛, ե՛կ...:

(Վայրկեան մը բեր պարսպ):

ԵՐԷՅԿԻՆ.— (Բիչ վերջ անապարանոց վերադառնալով, սարսափած) Սո՛ւրբ տիրամէր. էս ի՞նչ հող թափուաւ զիմ գլխին (խօսած պահուն կը փայլ դեպի սանը եւ ձեռները գլխուն զարնելով) Տո՛ր գնաց էս պահուս, յո՞ր փնտռամ... քոռանամ, վա՛խ զիմ մախտովին... (շուտով միւս դուռնէն ներս կը մտնէ, վերջին բառերը դրանք մեջ արձատանելով):

ՔԱՀ.— (Նոյնպէս անապարանոց կը վերադառնայ, երկու ձեռքը գլխին զարնելով, եւ երեցկիներն ետեւն գացած ասեն) Զոր գնանք, երէ՛ցկին, ձոր... վա՛յ, զիմ սո՛ւն կործանաւ, Աստուած, զիմ օջախ փլա՛ւ... Տէ՛ր, դարձո՛ գցատուն քո ի մէջն, տէ՛ր... (նոյնպէս այս վերջի բառերը դրանք սեմին մեջ ըսելով կ'անցնեսանայ):

4

ԶԱՐԹ (Առանձին)

(Վայրկեան մը բեր պարսպ. յետոյ կ'երեւի Զարո, սանը կանակեն, որ կը յառաջանայ խարխափելով. ձեռք բռնած է փայտ մը, կանակածոս աչքերով կը դիտէ չորս կողմը) Օ՛, ո՛չ... Անոնք կը փնտռեն զիմ ձորի եզերք, իսկ ես կը բարձրանամ լեռ... (աչքերը կ'ուղղէ դեպի ժայռը) Այո՛, դէպի լե՛ռ, դէպի վե՛ր... (զգուշութեամբ մեկ հոս կ'երթայ մեկ հոն, կը դիտէ, մեկ ձեռքը ականջին մտնել կ'ընէ, կուգայ բեմին առաջ) Զէ՛նք չունիմ... (բիչ մտածկոս, յանկարծ գլուխը վեր) Բայց ինչի՞ համար զէ՛նք... եթէ հանդիպիմ այդ ճիւղաներին, ես զի՛նքս

այս ժայռից վար կը նետիմ ու չեմ յանձնուիր... Իսկ վայրի գաղա՛ններ... հազար անգամ աւելի պարկեշտ են քան էտ անօրէններ... Փա՛յտ մը, բաւական է ինձ լեռ բարձրանալու...: Եւ ես գտայ փայտի տեղ այս դրօշակ, նուիրական զէնք մը, որ զիս կ'առաջնորդէ դէտի Մահ կամ Ազատութիւն... միայն թէ գանէի թաթուլը, գանէի Ռափայելը... Ա՛ն, Ռափո՛, հոգուդ մատաղ, դու որքա՛ն մեծ մարդ ես եղել... (մտածլոս ժուռ կուգայ) Դո՛ւ կըրթութիւն տուիր ինձ, դո՛ւ մութ աշխարհից լոյս աշխարհ բերիր զիս... Ես էն ժամանակ անատուն-ոչխար էի, և կը կարծէի թէ մեր զլիսի վերէն չոգող քրթիւր էս աշխարհի տէրն են և մենք էնոնց զերիններ... բայց դու ցո՛յց տուիր ինձ ճշմարտութիւնը... Եւ այժմ էլ դու իմ մտքի առջեւ աւելի՛ կը մեծանաս, երբ կը տեսնեմ որ, դու քո հանգի՛ստ թողած, քո քո՛ւն խանդարած, և մանաւանդ քո ա՛նձն ուրացած, լեռներ կը թափառիս, ասե՛ս, հայրենիքի փրկութեան, ասե՛ս, ժողովուրդի ազատութեան գաղափարին նուիրուած...: Ա՛խ, Ռափո՛, ես զգացի թէ միեւնոյն ասեմ զիս էլ կը սիրէիր, բայց գաղափարիդ նուիրականութիւն էնքա՛ն էլ մեծ էր, էնքա՛ն էլ սուրբ էր, որ իմ սէր կը նսեմանար...: Եւ ես գո՛հ էի. էգզլէ՛ս էլ պէտք էր, և էգզլէս լինելուն համար էր որ ես ճանչցայ քո հոգիի մեծութիւն... Այն ատենից, ես էլ ուխտեցի հաւատարիմ մնալ քո սիրուն, և էգ շուշանի պէս մաքուր և հրեշտակային սէր բեղմնաւորել, նուիրագործել քո նպատակի ճամբուն վրայ քեզ թեւ ու թիկունք կանգնելով... (քիչ մը ժուռ կուգայ, միտ կասկածով ականջ դնելով, եւ ձեռքի փայտը հարկոնս-ձեւ երկու ձայր ձեռացը մեջ առնելով, կը կենայ ու մեկէն դրօշակը կը պարզէ) Այո՛, Մա՛հ կամ Ազատութիւն... ո՛վ իմ նուիրական դրօշակ (կը համբուրէ) Ի՛նչ անուշ յիշատակներ կը զարթուցանես իմ մտքի մէջ...:

Մեր դպրոցական մեծ հանդէսի համար էր որ ես իմ ձեռքով գործեցի, այն ատեն, երբ Ռափայել «Մեր հայրենիք թշուառ անուէր» երգ կը սովորեցնէր մեզ...: Եւ ես ասացի իրեն, «Ա՛հա՛ եղբայր, քեզ մի դրօշ, զոր իմ ձեռքով գործեցի, զիչերներ ես քուն չեղայ, արտասուքովս լուացի...»: Եւ նա պատասխանեց ինձ, «Ամենայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ կը մեռնի, բայց երանի՛ որ իւր ազգի ազատութեան կը զոհուի...»: Այն օրից արդէն, ես էլ ուխտեցի քեզ զինակից լինել, Ռափո, բայց դու մերժեցիր... մերժեցի՞ր որ այս վաստ դանի տախանաց զո՞հ դասնամ...: Ո՛չ, ո՛չ, դպրոցական գրասեղանի վրէ չէ՞ր որ կրկին գո՛ւ ինձ ուսուցիր Շաքէի մեծութիւն. և կ'ուզէիր որ ամեն հայ կին, ամեն հայ աղջիկ էնոր գաղափարի բարձրութեան հասնէր...: Ուրեմն երկարէ՛ ձեռքերդ, Ռափո՛, վի՛ր առ զիս, ինչպէս վեր առիր և բարձրացուցիր իմ գաղափարներ...: (Ձեռքերը պարզած դիպի վեր, պահ մը կը կենայ այնպիսի մտազբաղ, յետոյ, յանկարծ) Այլեւս Հայ աղջկայ համար անական կեանք չի՛կայ, տուն մնալ անվայել է, անարգա՛նք է, երբ իր եղբայրները կը խողտողուին, երբ իր պատիւ ոտնակոխ կը լինի: Նա պէտք է լե՛ռ բարձրանայ, և մատակ առիւծներու պէս մոնչելով, մահուան սարսափներ տարածէ էգ հրեշներու, էգ ճիւղահերու մէջ... (մեկ ձեռքը դրօշակը, գետին յեցած, միւս ձեռքը կոված դիպի վեր, գայրացկոս աչքերով, զուխը ցնցելով) Է՛ն... մնաք բարեա՛ւ մանկական անս՛ւշ յիշատակներ... ես կը գնամ արիւնի ճամբէն դէպի Ազատութեան ճանապարհը. ես կը մեկնիմ, ես կը բարձրանամ դէպի լե՛ռ, դէպի վի՛ր, միշտ վի՛ր, միշտ ժայռի կատար, արծիւներու անմտաչելի բոյնը... Մա՛հ կամ Ազատութիւն...: (Դրօշակը ուսին, կը բարձրանայ, բերեւոսն ցատկոսելով):

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ



ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

ՏԵՍԻՒ 1

ՇՈՒՇԱՆ, ՍՄԲՈՒԼ, ՇՈՂԻԿ, ՅՈՎԻԿ

(Բեմին խորհրդէն գլխիկո՞ր եւ արսաւուարո՞ր աչեւով, անաբեկուած դեմքերով կը յառաջանան երկու կիներ, իրենց զաւակներուն ձեռքէն բռնած) :

ՍՄԲՈՒԼ.— (Շուշանին) Շտապի՛ր, քո՛ւրուկ, մկա էա գազաններ մեր յետեւից կը լարին... :

ՇՈՒՇԱՆ.— Իմա՞լ անել, զո՛ւրպան, էս մախտումներ կարնա՞ն շտապի... : Լուս աչխարն չի տեսնի՛ն էս գալլմներ որ էսպէս մըզիկ փէրիչան կ'անեն... :

ՍՄԲՈՒԼ.— Ի՞նչ անել, քու՛րուկ, ի՞նչ անել... մեր ճակտի գիր էսպէս է գրուկ, խո՛ղի... : Ի՞նչ ասեմ, փախնենք լեռ, գնանք սարեր, մեր գլուխ ազատանք, էս մախտումներ խալըսանք... :

ՇՈՒՇԱՆ.— Էսպէս ճակտի գի՞ր կ'եղնի, քո՛ւրուկ : Մեր էրիկներ ճգակոտոր արեցին ի մէջ բանտին, մեզ թորկիցին անտէ՛ր, անտիրական էս սեւաւոր աշխըրի մէջ... : Նեմի էլ կ'ասեն, զգրում պազդահա պարաք ունէք, զըմմեն առան տարան, եզներ լէ տարան. մկա ի՞նչ կ'եղնի մեր խալ, Սմբո՛ւլ ջան... : Ընա՛ մեզ լէ կ'ուզին փախցնել կուռօններ... : տո՞ր գնանք, ի՞նչ էնենք, ե՛ս լէ չեմ գի՛ննայ... : քոռանա՛մ, սե՛ւ գայ վըր գլխիս, չի տեսնի՛մ էս սեւ օր... :

ՇՈՂԻԿ.— (Մօրը փարած, սարսափահար) Մկա ես ի՞նչ կ'ենեմ, մարէ՛, որ քեզ լէ փախցնան... : Նալօ պապիս սպանի՛ն, եզներ տարան, տո՛ւն թալլեցին, որ դո՛ւ լէ փախնես, ես ի՞նչ հող կ'իտամ զիմ գլխին, մարէ՛, ... : չիէ՛... : ես քէ չե՛մ թորկա, մէրիկ... : (ուժով կը փարբուի մօրը) :

ՇՈՒՇԱՆ.— Բէ՛ զուրպան, զիմ աչից լոյս, մի՛ լաց եզնի... : էսիկ քէ՛ չեմ թորկայ մի՛նակ... : Ընա՛ մէկտեղ կը փախնենք չէ՞, չե՛ս տեսնի... :

ՅՈՎԻԿ.— Որ գան կուռօններ, Շողիկ, ես քար՛մ կը թալլիմ, էնոնց գլուխ կը պատիւմ. դու մի՛ վախենայ :

ՍՄԲՈՒԼ.— Դու իմցա՞ր, ախջի Շո՛ւշան, Սրբօ խաթուն գիշերս կ'ատէր, էս գազան բէկ Չարօյին է ուզել տէրարօջմէն. Չարօն ասեա, փախել է չը գի՛ննամ յո՞ր... : բէկն լէ դազապի է եկել, էս ապով է որ գլուկ կը թալանին... :

ՇՈՒՇԱՆ.— Կոռպէկո՛ւ եզնին, խո՛ղի... : լի՛ք, քէ բա՛ն ասեմ. մեղաւոր մենք ենք որ էսպէս գլուխ կը ծռանք ինոնց առաջ... : Դո՛ւ կը տեսնիս, ի՞նչ էլ անենք խեր չիկայ... : Գլուխ էլ կը ծռանք, նորից գմէ կը թալանին, կը ջարդին... : Որ էսպէս ա, որ ի՞նչ անենք կը ջարդուենք... : Տ՛Ֆ Աստուած, յորի՛ մենք լէ ինոնց գլուխ չի տրորինք ու էնպէս մեռնենք գնանք էս սեւաւօ՛ր աշխըրից... :

ՍՄԲՈՒԼ.— Խա՛, ըզո՛րդ ա, քու՛րուկ, ըզո՛րդ կ'ասեա ըմմա, չէ՞, տէրաէր կ'ասէ, Խայ քրիստոնի՛ նամար արուն թափել մեղք ա, խոզուն մեղք կ'անի, արնի տէր կ'եղնի... : մէկեար սըբ տիրամէր ձեռք դցի մեզ... :

ՇՈՒՇԱՆ.— Ես չեմ խաականայ էսպէս բան, քու՛րուկ : Որ էս մախտում չեղնէր, ըզո՛րդ կ'ասեմ, ես կը փախնէի՛ էսպէս... : դու տեսնէիր ես ինոնց գլուխ իմա՛լ կը տրորէի փետով... :

ՄՄԲՈՒՎ.— Որ ճար չիկայ, ի՞նչ անել, քո՛ւրուկ, շտապինք քիչ՛մ, ելնենք լե՛ս, թագնուենք, հա՛ր էս զազապ անցնի գիւղի վրայից...:

ՇՈՒՇԱՆ.— Որ լեռ փախնենք կը խալըսա՞նք, Սըմբո՛ւլ ջան...: Էնոնց քինի՞մ գէլու պէս հոտ կ'առնայ, տո՛ր էլ գնանք, էնոնք զմէ կու գտնին:

ՄՄԲՈՒՎ.— Իմա՞լ անել, քուրո՛ւկ, ես լէ չեմ գիտենայ...:

ՇՈՒՇԱՆ.— Լսի՛ր, ես ի՛նչ կ'ասեմ: Մկա կ'ելնենք լեռ, կը թագնուենք ժայռերի յետեւ, կը հաւքենք քար ու կը սպասենք, հա՛ր էդ զաղաններ էտքիաց անցնեն: կը հայինք որ զմէ կու փնտռտան, որ աղատու՞մ չիկայ, ըմենքս մէկանց սարից ի վար էնոնց գլխին քար կը թալլինք ու շանատակ կու հանինք...: Եղա՞ւ, կ'աղատանք էդ շեքի ձեռնից. որ չեղա՞ւ, մենք զմէ ժայռից ի վար կը թալլինք, կը պրծի, կը լինայ... (յուզուած՝ աչքերը կը սրբէ):

ՇՈՂԻԿ.— Մի՛ լայ, մարի՛կ, մի՛ լայ. էգուց ես մեծ քար՛մ կ'առնամ, Յովիկայ հետ էն լեռան կատարից վար կը զլտորամ, կուռոնների զլուխ կը ջնջխամ... մենք լէ կ'աղատանք...:

ՇՈՒՇԱՆ.— (Աղջկան երեսը շոյելով) Հոգո՛ւզ մատաղ, զիմ ապան ախշին. ըհա էապէս. արի՛, դո՛ւ լէ, Յովի՛կ, տո՛ւր ձեռդ Շողիկան, ո՛ւլտտ արէք հոս, էս ժէ-ռի ոտից տակ, ձեր պապերի՝ Մուրօյին ու Նալօյին վրէ՛ժ պէտք է առնաք էն անորէն անաստուածներից...: Ձեր պապեր մեռան, բայց հողի ներքեւից էնոնք կը ձէնեն, «Մեր արնի տեղ արին պէտք է առնաք...» կ'իմնաք, չէ՞...:

ՅՈՎԻԿ.— Որ անգամ մի մեծանամ, մո՛րքուր, դու տեսես, դո՛րդ, կ'առնամ զիմ պապի զանջար, կը խօթամ էն կուռոնների փոր... է՛նպէս արին կը խանամ...:

հա՛ն... (Երկու ձեռքը ուժով իրար կը զարնէ ծափ զարնելու պէս):

ՇՈՂԻԿ.— Չի՛, Յովիկ, չի՛, տես քէ բան սաամ. (ձեռնով Յովիկի ուսին կամաց զարնելով) մկա լեռ կ'ելնինք, քար կը հաւքինք, սարից ի վար կը զլտորանք ու էտ կուռոնների զլուխ կը ջնջխանք:

ՄՄԲՈՒՎ.— Տէ՛ գնանք, զուրպան, չե՞ս իմնայ, գիւղ զարմաղալի մէջ ա, մկա էտ անորէններ կիզան մեզ կը գտնին...:

2

(Նայն միջոցին բեմին խորէն խուժք մը գիւղացիներ խաբխափելով եւ աւազելով կը յառաջանան):

ՇՈՂԻԿ.— (Ետին դառնալով) Մէրէ՛, ես կը վախենամ (մօրք փաքրուելով) համա՛ն, մէրէ, կուռոններ կիզան... փախնենք, փախնենք (մօրք փլանցփէն փաշելով):

ՅՈՎԻԿ.— (Նայնպէս ետին նայելով) կուռօ չի՛ն, Շողի՛կ, կուռօ չին... չե՞ս տեսնի, իայ քրիստոնէ ին... էնոնք լէ կիլան...:

ՄՄԲՈՒՎ.— Եամա՛ն Աստուած, թալանուած իայեր են, կը փախչեն մեզ պէս...: Մօտացէ՛ք, զո՛ւրպան, մօտացէ՛ք (գիւղացիք կը մօտենան):

ԾԵՐՈՒՆԻ ՄԸ.— (Կաղալով եւ հեւալով) Բարե՛ւ ձէ, զո՛ւրպան. էս պահուս ի՞նչխ կ'ենէք էս տեղ. էս Տէր Սարգսայ գիւղ չիէ՞...:

ՇՈՒՇԱՆ.— Խրամա՛նք ա, պապէ՛. ո՞ր տեղաց կիզաք...:

ԾԵՐՈՒՆԻՆ.— Էն զահրու՞մար գիւղից, Մչլաչենից,

դու սաս՝ Մշկաւերից, խաթուն ախշի... էն գալըմ կըմ
մանչօններ մեզ պան չի թորկեցին. զիմ ջահիլ սպանին,
զիմ խարս տարան, զիւղ կրակեցին, մալ մուլք թալա-
նեցին... Ի՞նչ անել. մկա կը գնանք Մոսկըֆա երկիր,
խալըասնք էս գոթիւքից... Ասացինք բրդուճ մի խաց
ուտինք Տէր Սարգսայ զիւղ, էնպէս ընկինք ճամպախ...
ՍՄԲՈՒԼ. — Պապէ՛, մի՛, մի՛ մնաք էստեղ. զուլում
էս զի՛ւղն լէ բռնել ա... Միրզա բէկ զազապ ա գարձել.
տուն տեղ կը թալանին, պագղասեա կը հաւքին, հարս,
ախշին ծամերից բռնած կը քաշկատան, կը տանան...
Մենք լէ էս չար պահուն էնոնց զըմէն կը փախնենք,
լեռ կ'եղնենք, չո՛ւր էս գուլում անցնէ...

(Սոյն միջոցին խորեհէն հեհեհալ երգը կը լսուի քրմ-
բուկով եւ արինգով) :

Տէ, պըժան պըժան չէքրէ ժանէ,
Ղուրպանըմ չալէ խըչկէ ֆըլէ
Չալէ բէչէ, պէլէք խարէ
Ֆըլէ խաշիկա էզ հայրանէ,
Նա, նի, նա, նայ, նանի, նանայ...

Պուքըժըմ մէրան, թալան պըքըմ,
Խըչկէ վիժի հալալ պըքըմ,
Էզ տու խաղըմ խըչէ ֆլէ,
Հատ տէտտէթէ ալայ պըզըմ,
Նանի, նանայ, նանի, նանայ...

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ո՛վ կիներ, կիներ, գեղեցիկ կիներ,
Չեր սիրուն մատաղ, Հայ աղջիկներ,
Աչքեր ունիք սեւ, ոսկի մազեր,
Հոգիս մատաղ ձեզ Հայ աղջիկներ :

Մորթենք ֆլաները, թալանենք,
Իրենց աղջիկներ մեզ հալալ,
Ես քեզ սիրեցի Հայ աղջիկ,
Տուր ձեռքդ մէկտեղ պար բռնենք :

ՍՄԵՆՔԸ. — (Իողանաւ եւ սարսափած) Փախնենք,
փախնենք, եաման Աստուած, քուրդերն են... գալըմ-
ներ քէֆ կ'անեն... (գեպի լեռ կը փախին իրար ետեւ,
իսկ ֆլուրերը երգելով պարելով բեմին մեկ կողմէն կը
մտնեն, եւ միտս պարելով երգելով միւս կողմէն կը հե-
ռանան) :

3

ՔԱՀԱՆԱՆ. — Խել ախորոյս եւ խարխափելով բեմ կու-
գայ. մեկ հոս մեկ հոն երեւուն եւ աչքերը շլմորուն, իբր
քե մեկը կը փնտռէ) Տո՞ր գնամ, յո՞ր փնտտամ... Երկ-
նաւոր Աստուած, էս ի՞նչ հող թափուաւ զիմ գլխին...
(Երկու ձեռքերը գլխին կը զարնէ) Թաթուլ տուն թորկեց
գնաց... Չարօն լէ գնաց... երէցիկն լէ չերեւայ... չը
զիննամ տո՞ր է... : Զիմ տուն թառուժաւ կ'եղնի...
զիւղն որ ասես զարմազալի մէջ ա... անորէն զազաններ
ինկել են աների մէջ... վա՛յ իմ գլխին... վա՛յ ինձ,
վա՛յ ինձ... (միտս ձեռքերով գլուխը կը ծեծէ եւ մեկ հոս
մեկ հոն կ'երթայ կուգայ, եւ նոյն միջոցին ներսէն պո-
ռալու, կանչուրսեղու ձայներ կը լսուին) Ի՞նչ կ'եղնի (ա-
հաբեկած) զի՛ւղ կը կործանի, Աստուած, դո՛ւ ողորմ իր :

4

(Մեկ ֆանի բուրդէ կասլած դեմքերով բեմ կը խուժեն) :

ՀԱՍՕ.— (Պառալով եւ դեպի ֆանանան վազելով) Բրա՛, աճա՛նցն է, աճա՛նցն է քէշիշ... (խաղոյն ֆանանային ուսէն բռնելով) Տօ քէ՛շիշ, սօ շո՛ւն ֆլա... էս քան յոգնացանք քէ փնտաւարով... ո՞ր մէկ սաստանի ծակ մտած էիր... վալլա՛ն (ֆանանան ցնցելով) դու մեր բէգի ձեռաց չես պրծի... տէ՛ ասա, յո՞ր թագուցիր խըջէն...

ՔԱՀ.— (Պաղատագին) Մեռնի՛մ քօ արեւուն, Հասօ՛, վաղ էդուց անից փախել է, ես լէ չեմ գիննայ սո՞ր գնաց... էնքան լէ փնտաւարի... :

ՀԱՍՕ.— (Միւսները հոս հոն կը դիտեն, կը փնտեն) Արի՛, մի՛ տաքանար. էս շուն ֆլաներ էսպէս են, մեզ խաբել կ'ուզին : Ըզո՛րդ կ'տեսմ, բրա՛նիս, էս անիծածների տուն տեղ թալանի՛ր, աղչի՛ներ խլի՛ր, իրանց գլուխ լէ արորիս, հարա՛ւ ա, հա՛ վալլա՛ն... : Իրանց քէշիշն որ էսպէս սուտ կը խօսայ, է՛լ խտակացէք էն շներ ի՛նչ կ'եղնին... :

ՄՍՍՕ.— Ըզո՛րդ լէ էնպէս ա, բրա... սօ քէ՛շիշ, էս քան տարի մենք աղ ու հաց կերած ենք քէ խտա. էսիկ չեմ ուզի քէ զիեան գայ, դու հարուր մարդ ես, մեզք կ'անես քօ արեւուն, ասա՛, սո՞ր ա խըջէն... :

ՔԱՀ.— Ղո՛ւրպան, չեմ գիննայ... :

ՀԱՍՕ.— Տօ Մասօ՛, ինչի՞ էս շների հետ էսպէս կը խօսաս. ինո՞նց թիկունք որ փետով չի տիխ, չեն խախանաիր :

ՄՍՍՕ.— Չիէ՛, ղո՛ւրպան, չիէ՛. հարուր մարդ ա, մեզք ա, էնիկ եօլա կիգայ... :

ՀԱՍՕ.— Որ եօլա չիգայ, ի՞նչ կ'եղնի, բէգի հօքմ

գետի՞ն կ'ըննին : Էնոր պէս քածեր, խաղարն լէ քիչ ա, ղուրպան եղնին բէգի արեւուն... :

ՄՍՍՕ.— Ախպէ՛ր, որ ես գիտեմ, էն քած թէսլիմ չեղնի, հա՛ վալլա՛ն... ո՞վ գիննայ յո՞ր թագնուած ա :

ՀԱՍՕ.— Տօ՛, չեղնի՞ նախօյի քածի խիտա փախնէ. էն քածն լէ քիչ համան չիէ՛, հա՛... :

ՄՍՍՕ.— (Յոյց տալով) Ըհա՛, բէգ լէ կիգայ. քէ՛շիշ, ես քէ խտար կ'տեսմ, լաւ բան չեղնի... :

5

ՆՈՅՆԲ, ԲԷԿ ԵՒ ՄԷԿ ՔԱՆԻ ՉԻՆՈՒԱԾ ԳՐԹԵՐ

ԲԷԿ.— (Բարկացած դեպի ֆանանան կ'ուղղուի) Ախրր գասօք էս շուն քէշիշ :

ՀԱՍՕ.— Բէ՛գ, ի՛նչ որ արեցինք, չուզի թատլիմ անել... :

ԲԷԿ.— (Խօսք սերտոզ ուղղելով) Տօ քէ՛շիշ, սո՞ր ա խըջէն, ի՞նչ արեցիր... որ թատլիմ չանես, վալլա՛ն, էս քօ գլուխ էս ժէտի տակ կը ջնջիամ, հա՛... (ըսած միջոցին ձեռք կոփելով, մեկ ֆանի անգամ ֆանանային գլխուն կը զարնէ) :

ՔԱՀ.— (Ռուսն օձիքէն երկու ֆրերը բռնած, մերք կը ցնցեն, մերք կը ֆաշլոսեն) Բէ՛գ, խաղա՛ր սպրես... ես չեմ գիննայ... շատ էլ փնտաւարի չի գորի... Աստուած քօ արեւ պանի, բէ՛գ... :

ԲԷԿ.— Լուի՛ր, պատա՛ւ սաստանայ... (սոյն միջոցին խորեքէն՝ գիւղին մեջէն վայնատուններ, ինչպէս եւ ֆիւրի

մը աղեկսուր ձայնը կը լսուի, եւ պէյը ետին դառնալով) **Բրա՛... Ի՞նչ կ'եղնի... (մտիկ կ'ընեն ամենքը մեկեկ) :**

ՔԻՒՐՏԻ ՉԱՅՆԵՐ. — Բրա՛նք, կուսո՛նք, խառէ՛ք, խառէ՛ք... :

ԿԻՆԵՐՈՒ ԵՒ ՏՂԱՆԵՐՈՒ ՉԱՅՆԵՐ. — Եամա՛ն Աստուած... վո՛ւյ... վո՛ւյ... կոռպէկըր եղնիք... ձեր սուռն աւերի՛... վո՛ւյ մարիկ... վո՛ւն, ձեռքի կոտորու... պապէ՛... գլուխի... ա՛յ... (լալու ձայներ) :

Բէկ. — (Հոն գտնուող ֆիւրսերուն) **Տօ՛,** ի՞նչ փէտի պէս կուտցիր մնացել էք... իրիշկէ՛ք հեղձ ի՞նչ կ'եղնի... էա շուն ֆլաներ գլո՛ւխ են վերցուցի... կուսոնքի՞ն կը սպաննին... ի՞նչ կ'եղնի... (Բանաւային օձիքէն բռնողներուն) Դուք լէ էս անիծած քէշիշ էա մէտին կապեցէ՛ք, չո՛ւր խելք գլխին գայ :

(Բանաւան ֆաւկոսելով ծառին մօտ կը սանիկն) :

ՀԱՍՕ. — (Որ Բանաւային օձիքէն բռնած է) **Տէ՛ քալիր, անի՛ծած, աէ... :**

(Խորհրէկն եկած ձայներ կը սասկանան, ֆիւրսերու ձայներով խառն) **Վայլըմ՛ըն, վայլըմ՛ըն... հաւարէ՛, խառէ՛ք... վալէլէ՛ր... վալէլէ՛ր... :**

Բէկ. — **Տօ Հա՛սօ, Մասօ՛, հաւա՛ր հասէ՛ք... :**

(Պէյը եւ ֆիւրսերը վազելով կ'երթան, Բանաւան ծառին կապուած է խաչաձեւ) :

ՔԱՀԱՆԱՆ (Առանձին)

(Մարած աչեւրով չորս կողմը դիտել կ'ուզէ . կապերու ցաւէն մերթ քմերթ կը փորձէ շարժկիլ, յետոյ գլուխը

կողմնակի վար ծռելով . ներսէն միտ վայնասուններ կը շարունակուին եւ կոսրելու, վիելու ձայներ կուզան) **Ա՛խ, ճիկեարսի կը խշխշայ... էա... մախսունների ձայնից... էս ի՞նչ գուլում ա... էս ի՞նչ սեւ իջու վըր մեր գլխին... ողջ գիւղ լաց ու կոծի մէջ... Ա՛խ, չեմ դիմնայ, Աստուած, իսայ քրիստոնի վարձք էսի՞կ ա... էսքան տարի, ըմմեն օր գլմ երես գետին գցած, կ'աղջթամ, կ'աղջթամ... : Երկնաւոր աէր... որ մենք մեղաւոր ենք, որ մեր ձէն չես լսի, ապա էսա մախսունների մե՛ղք ի՞նչ ա... : (Քիչ մը լուռ) Որ գիտենայի՛, որ գիտենայի՛... չիէ՛, չիէ՛... էսպէս արգարու՞թիւն չի՛ եղնի... էսպէս վարձք չի՛ եղնի... : Մէկեար էս անիծած աշխարհ էդ անհաւատների համա՛ր է եղել... : (Քիչ մը լուռ) կը թալանի՛ն, կը զարկեն, կը ջարդի՛ն. չեն աշխատի, խօ՛, մեղնից էլ լաւ կ'ապրեն... : Որ է՛սպէս ա, Ա՛ստուած, որ գու էս գուլումներ կը տեսնիս ու էք անօրէններին կը ներիս, էլ ի՞նչի՞ իսայ քրիստոնէն աղօթի... էլ ի՞նչի՞ իսայ քրիստոնէն տատի, աշխատի... (Քիչ մը լուռ) մեղա՛յ, երկնաւոր աէր, մեղա՛յ... (Քիչ մը լուռ, կը շարժկի, ներքին ըմբոսացում մը յառաջ կուզայ իր մեջ) **Չիէ՛... չիէ՛... ների՛ք որքան մեղա՛յ տացի... ների՛ք որքան աղօթացի, մղկացի... (ներսէն եկող աղիողորմ ձայները լսելով) Անէ՛ծք... անէ՛ծք... (մի քիչ լուռ կենալէն յետոյ) Թաթո՛ւլ, իմ աշից լոյս, իմ որդի՛ն, իմ ճա՛նը... յո՛ր ես, արի՛, արի՛. տես որ քո պապին ի՞նչ արին, տես որ քո վաթան ի՞նչ կ'անեն... (Քիչ մը լուռ) Մեղա՛յ, քէ՛ մեղայ, որդի՛, ես մեղաւոր եմ, բայց գու ների՛ր քո հալւոր հօր... : Արի՛, ա՛ն զէնքերդ, հաւար հատիր. էլ բան չեմ ասի, էլ չե՛մ նեղանայ... : Անէ՛ծք, հաղա՛ր պորտի անէ՛ծք էս վատերի գըլխին... : Երկնաւոր աէր, խա վաթսուն տարի է ես քէ կ'աղջթամ... ի՞նչ վաթսուն տարի, չէ՞ Ռափօն կ'աաէր,****

էսիկ վեց խարիր տարի ա իյայ քրիստոնէն կ'աղօթայ ու կ'աղօթայ, մկա էա ըմմեն աղօթքներ անէծքի փոխի՛ր, տէ՛ր, վերէն, քո հրեղէն երկինքից էդ իմերի գլխին թափիր... աշխըրի վրէ էա նամարտ անօրէններ տեղ չի գտնին ըոյն շինելու, դադար առնելու... և եղնի որ օր'մ մոռանաս, Աստուած ամենակալ, քո անէծքներ ի նոնց գլխին թափելու, էն օր Ղովաի կնոջ պէս տեղնից տեղ քար կտրին... (կը շարժակի կապերու ցաւեն) ՝ թաթո՛ւլ, հասի՛ր, որդի՛, ների՛ր քո պապին... Ռափօ՛, յո՞ր ես... ա՛խ, դու սուրբ մարդ էիր, ես չի խտակա ցայ... ըլորդ լէ քո խօսքեր աւետարնի խօսքեր էին, բայց զիմ հաստ գլուխ չի խտակացա՛ւ (գլուխը ժայռին կը զարնէ) Չարօ՛, իմ խորտակ համա՛ն աղչին... յո՞ր ես, յո՞ր ես... իսկի չեղնի՞ էա անիծած դազան քո յետեւից լարի... թաթո՛ւլ, Ռափօ՛... հաւար հասիք զիմ աղջկայ... հաւար հասիք, զիւզ կը թալանին, կը քանա գին...:

7

ՆՈՅՆԸ, ԲԷԿ ԵՒ ՄԷԿ ՔԱՆԻ ՔՐԹԵՐ

ԲԷԿ. — (Շտապով ուղղակի գեպի քահանան ուղղուելով) է՛լի կը խորթա՞ս, անիծած մարդ, տէ՛ ասա՛, յո՞ր է Չարօն...:

ՔԱՆ. — (Արատաւախառն եւ պաղատագին նայուածով) Բէ՛գ, ոտիցդ հողին զուրպան... չէ՞ քէ ասացի ինքն է փախել... ապրած կենաս, բէգ, քո ջանքերի արեւուն, մի՛ տանջիր ձիկ, մի՛ քանդիր զիւզ... էսքան

տարի աղ ու հաց ենք կերած իրար խեա... զիմ սուն, զիմ օջախ էսքան տարի զօնախ արեցի քո պապերին... ողջ զիւզ լէ քէ զուլ-զուրպան արեցի... մի՛, մի՛ էս զուլում... Աստըծու սիրուն եղնի, բէ՛գ...:

ԲԷԿ. — Լռի՛ր, չո՛ւն. ֆլային Աստուած չի կայ... (Գիւղը ցոյց տալով) կը լսա՞ս, զիւզ կը թալանին...:

ՔԱՆ. — Նորից կ'աղչամ, բէ՛գ, ապանի՛ր ձիկ, մի՛ աւերիր զիւզ... Մեղք կ'անես էս քուլֆաթին... էնոնք քո կթան կովերն են...:

ԲԷԿ. — Տօ՛ ես քէ ասացի տո՞ր է խըչէն. դու էա ասա, թէ չի՛ (բռնեցիք սեղմած եւ ակուաները կհրացընելով քահանային վրայ կը վազէ, եւ կուսիքը վերցնելով) գանկդի կը ջնջիս...:

ՔԱՆ. — (Սահմուկած, կ'ուզէ խօսիլ բայց չկրնար) է՛նչ... բէ՛գ, բէ՛գ... դու կ'ուզես ախրը զիս ապանիլ, ապանի՛ր, ես մեռնելուց չեմ վախենայ. բայց թո՞ղ որ վերջին անգամ աղօթիմ, էնպէս ապանի՛ր...:

ԲԷԿ. — (Ձեռքը պարզելով) Տօ՛, քո աղօթքից ի՞նչ խեր կիզայ, անհաւատ ֆլա... դու բաս ասա՛, յո՞ր է Չարօն, ես քէ կը ներիմ...: Տէ, մկա աղօթիր, սուլ շունմիչ եղիր, ի՛նչ կ'ուզես արա՛, ը՛հա՛ ես կ'սպասիմ... (ձեռքերը ետին կապած կը հետանայ քահանային ֆովէն եւ բարկութեամբ ժուռ կուգայ, ծանր ծանր ֆայլերով. ֆիւրսերն ալ կը հետեւին իր ֆայլերուն) :

ՔԱՆ. — (Շարժակելով) Տէ՛ր ամենակալ, Աստուած Աբրահամու, ընդէ՞ր թողեր զիս... (Վի ֆիչ լուռ) Մշո՛յ սուլթան սուրբ կարապետ, դու որ մեր տղաների ուժ ու քաջութիւն կը պարգեւես, երկարի՛ր ձեռներդ, քակի՛ր այս կապանքներ, և քո հրեղէն սուրով հալածի՛ր այս անօրէն անասուածներ...: (Մերք ընդ մերք ներսէն երկ-վըրցներ) Դատահ՛ տէր զայնտակ, ո՛յք դատեն զիս...: Ա՛խ, թաթո՛ւլ, Ռափօ՛, դուք հասէք, ձեր զէնքերով,

ձեր սուրբերով... Ո՛վ Աստուած, քո սիրտն էլ չի խշխշայ էա մախարմների ձայնին... (պահ մը գլուխը մեկ կողմ կը հակէ, յետոյ աչքերը խոռո խոռո կը բանայ, կը զառանցէ) Ա՛յ, ի՞նչ կը տեսնիմ... օ՞հ... Ռափօ՛, դո՛ւ ես... ասլան տղայ. էա սրքան էլ մեծացեր ես... ոտքերտի գետին, գլուխդի երկինք կը դիպնայ... էդ քո զանչա՞րն ա, որ կէծակի պէս կը փալիւլայ... է՛ն ո՞վ ա ... է՛նէ՛, թաթո՞ւլն էլ քո կողքին է կայնուկ... դոչախ տղերք... Աստուած օրհնի ձեզ... չէ՞, կը ներքիք ձեր աէր պապին... Զարօ՞, զիմ աչից լուս, դո՛ւ լէ առիւծների մօտ կը կենաս... զուրպան եղնիմ քո բօյին-բօսին ... խա՛, աղջի՛, ըղօրդ էլ էտպէս ա... որ չարչրուելով կը մեռնէի, վաթանի համա՛ր մեռնէի, զիմ խաչ խանչարի կոթ սուգէի, և էա անօրէնների արինով մկրտէի ... Զա՛րկ, Ռափօ՛, զարկէ՛ք դուք լէ թաթո՞ւլ, Զարօ՛. արի՛ւն... ը՛հա՛ էտպէս թափեցէք վատերի արիւն... չէ՛, չէ՛, մեղք չէ՛, դո՛ւրպան, զա՛րկ, բան չիմ ասի (բարձրաձայն աղաղակելով) զա՛րկ, մեղք չէ՛, վա՛րձք է, վա՛րձք... :

Բէկ. — (Յանկարծ դեպի երեցը դառնալով) (Տօ՛ ի՞նչ կ'եղնիս, քէչիչ. խե՞ւքդի թոռա... Տօ՛ էտպէս աղօթք կ'եղնի, անհա՛ւատ, աէ՛, կ'ասե՞ս յո՞ր է խըչէն... (կը մօտենայ բռունցքը գլխին) :

ՔԱՂ. — (Աչքերը խոռո խոռո բացած, կը հազայ ուժգին) Բո՛ւհ, ցա՛ծ կենդանի, որ քո ուժ էտպէս անդօրների վրայ կը փորձիս... :

Բէկ. — (Ասողած) էտպէս, հա՞... քեզի՛ չուն Ֆլա... Կրա՛կ, կուռօսներ (փխրերը իսկոյն իրենց հրացանները կ'ուղղեն ֆահանային, բայց նոյն միջոցին ժայլին գազաբեկն անեղ ձայն մը կը լսուի) :

ԶԱՐՕ. — (Ժայլի գագաթը բարձրացած, լոյսի նաւագայքներու մեջ, դրօտակը պարզած, անեղ ձայնով կը գոչէ) Կա՛ց, կա՛ց... անօրէ՛ն մարդ. էդ ոճրագործ ձեռնեղ անդօր ձերուկի անմեղ արեան մէջ մի՛ թաթախիւր. կա՛ց, անդգամ, այդ քաջերու գործ չէ. այդ թշուառ ձերուկ մի տղայ էլ կարնայ սպանիլ... որ սիրտ ունեա, վե՛ր ել, այս ժայռի կատար... բայց դու է՛նքան էլ վատ ես որ չես համարձակի... (սոյն միջոցին ամենքն ալ ակնապիւ Վեր կը նային) :

Բէկ. — (Շլմարած ու տպիտ նայուածով ու աղաչելով) Որ է՛դպէս, Զարօ, չե՛մ սպանի, Աստուած էլ վկայ, չե՛մ սպանի... Իջի՛ր, վա՛ր իջիւր, եամա՛ն աղջի, եամա՛ն հուրի, արի՛, արի՛... (ձեռները վեր բարձրացուցած, վար կանչելու շարժումով) :

ԶԱՐՕ. — վա՛ր... վատերո՞ւ քով... երբե՛ք, կը լսե՞ս, երբե՛ք... քաջերու տեղ վերն է... :

ՔԱՂ. — (Զարմացած) Զարօ՛... հէ՛յ ասլան աղջի... :

Բէկ. — Իջի՛ր, Զարօ՛... քո արեւուն զուրպան... Իջի՛ր, դու զիմ գլխին սուլթան կ'եղնիս, ես քո ստիցը հող կը դառնամ... :

ԶԱՐՕ. — Լսի՛ր, անդգամ ոճրագործ... ամօ՛թ քո աչիրութեան, որ էդպէս անդօր և անմեղ մարդերու արեան մէջ կը թաթախես այդ պիղծ թաթիւրդ... դէ՛հ, տեսի՛ր, տեսի՛ր Հայ աղջիկ ի՛նչպէս իր կուռօթիւն, իր պատիւ ժայռերի կատար կը հասցնի, մինչև արծիւներու բոյներ, ուր քեզ պէս խոզեր չեն կարող բարձրանալ... :

Բէկ. — (Բարկուրեամբ որոտալով) Տօ կո՛ւռօսներ, ինչի՞ էտպէս կրած կանգնած էք... վե՛ր ելէք, բռնեցէ՛ք

էս քածին... (մեկ քանի քրքեր ժայռն ի վեր կը փորձեն բարձրանալ) :

ՔԱՀ. — (Աչքերը վեր յառած) Աստուած ասործոց, Աստուած ամենակարող, անէծքնե՛րդ, արդարութի՛ւնդ... :

ՁԱՐՕ. — Էհէ՛... տեսէք սա վատերին. աղջիկ՛մ բըւնելու համար տասնեակներով կը յարձակին... (ժայռի դիմացի կողմէն վազելու եւ պոռալու ձայներ կը լըսուին, որ միջոցին Ջարօ գլուխը այն կողմը կը դարձնէ) :

Հե՛ռՈՒՒՅՆ ԵԿԱԾ ՁԱՅՆԵՐ. — Յառա՛ջ... ի զէ՛ն... մա՛ն վատերուն... վրէ՛ժ... վրէ՛ժ... :

9

ՍՄԲՈՒՂ, ՇՈՒՇԱՆ, ՇՈՂԻԿ, ՅՈՎԻԿ ԵՒ ԳԻՒՂԱՅԻՆԵՐ

(Ոայն միջոցին Ջարօյի կեցած ժայռի դիմացի գագաթէն գլուխին վեր կ'առնեն, եւ միեւնոյն ասեմ ալ ժայռն ի վեր ելլել փորձող բուրքեր ահաբեկած վար իջնել կը փորձեն, մեկ քանին կը բռնուին խոււրէն) :

ՀԱՍՕ. — (Վար իջած ասեմ) Զօռե՛ց, բէ՛ց, զօռեց, խալըսում չիկէ... ԶանՖիթայինե՛ր... :

10

(ժայռի գագաթը զինուած յեղափոխականներու բազմութիւն մը կը տեսնուի, Ռափօ՛ իր խումբով) :

ՁԱՐՕ. — (Խոււրէն եկած կողմը կը դառնայ, ուրախութենէն հիացած, դրօշակը ծածանելով) Օ՛, հազա՛ր ապրի՛ք, ազատութեան ու խառնորներ... :

(Բեմին խորքերէն կ'երեւին մեկ քանի զիւղացիներ, որոնք փախչող բիւրքերու ետեւէն կը վազեն, կը բռնեն, կը կռուին, յետոյ կ'երեւին նաեւ Կարօ եւ Պեօ, ձեռքերնին մահակներով) :

Բէկ. — (Մեկ հոս մեկ հոն վազվաճելով, շուարած) Տօ՛ ի՛նչ կ'եղնի, տօ կո՛ւսօներ... :

ՇՈՂԻԿ. — (Վերէն ձեռքերը շարժելով) Արի՛, Յովի՛կ, շտապի՛ր, քար թալլինք էս չնորի գլխին, արի՛, արի՛... :

ՅՈՎԻԿ. — Մէկտե՛ղ, Շողի՛կ... մեր պապերի խորուն համար... մէկտեղ թալլինք :

ՁԱՐՕ. — Զա՛րկ Շողիկ, զա՛րկ Յովիկ... :

ԽՄԲԱՊԵՏ. — Կրա՛կ... :

ՏԱՍՆԱՊԵՏ. — Մա՛ն վատերուն... :

Բէկ. — (Կասկած եւ շուարած) Տօ կո՛ւսօներ, տօ ինչի՛ էք կանգնած... սո՛ր է զիմ հրացան... չուսնե՛ր, կրա՛կ բացէք էս անիծած ֆլաների վրէ՛ն... (ամեն կողմէն կրակ, վերէն, վառէն, իսկ ժայռերու գագաթներէն Շողիկ, Յովիկ եւ միւս զիւղացիները քար կը տեղացնեն արագ արագ բիւրքերու գլխուն . կ'սպաննուին մեկ քանի բիւրքեր, զիւղացիներ եւ քահանան) :

ՔԱՀ. — Ուա՛ն... հասի՛ք, սրդի՛ք, զարկուա՛... աւնէ՛ժք... անէ՛ժք... հուրն յաւիտանից անէ՛ժք ձեր ցեղին, իժերու ծնունդներ... (միւս բուրքերը փախչիլ կը փորձեն, Կարօ, Պեօ եւ զիւղացիները կը հետապնդեն) :

ԿԱՐՕ. — Յո՛ր կը փախնէք, պտա՛ւ քածեր... :

ՊԵՏՕ. — (Գիւղացիներուն) Տօ՛, ճամպլիններ գոցեցէք (կը բռնեն բիւրքերը եւ կը կռուին) Ահօրէ՛ն անաստուածներ... (վերէն բազմութիւնը վար կը խուժէ, իրար կը խառնուին, նոյն միջոցին բէկը փախչիլ կը փորձէ) :

ՁԱՐՕ. — (Դրօշակը ձեռքը վազելով) Մի՛ փախիր, վա՛տ... :

ԹԱԹՈՒԿ.— (Դառայնը մերկացուցած ուղղակի բեկին վրայ կը յարձակի, եւ ուժգին բափով կուրծքը կը մխ) Ա՛ն, անզգամ՛, թաթուլի վրէժ... հը՛ն...:

Բէկ.— (Ձեռները բացած ինկզինքը պաշտպանել ուզելով) Ուա՛ն... հաւա՛ր կուսօներ... (գետին զլսորելով) Տօ՛ էս ֆլա՛ն... սօ՛...:

ԹԱԹՈՒԿ.— Կորի՛ր, վա՛տ գազան...:

ՔԱՀ.— (Հասկլսալով) Ապրի՛ս, որդի՛, Աստուած բազո՛ւկդի օրհնի...: Զա՛րկ, սպանի՛ր, Աստուած կը նեւրի... ուա՛ն... կապերսի քակտեցէք, ե՛ս լէ զարկեմ... էնպէս մեռնիմ արիւնի ճամբիսի վրէ...: Հասէ՛ք, կը մեռնիմ... պուամ՛ մ ջուր... Թա՛թուլ, Զա՛րօ, հաւա՛ր հասէք ձեր հօր...:

ԶԱՐՕ.— (Վազելով) Կիզանք, պապէ՛, կիզանք...: Արի՛, Շողի՛կ, արի՛, դրօշակ բռնիր...:

ԹԱԹՈՒԿ.— (Նոյնպէս վազելով) Ա՛խ, պապէ՛...:

ՇՈՂԻԿ.— (Դրօշակը առնելով) Յովի՛կ, արի՛, դրօշակին տակ (դրօշակը պարզած կը կենայ) :

ՅՈՎԻԿ.— (Վազելով Շողիկին ետ կը կենայ, մեկ ձեռքով ալ ինք բռնելով դրօշակը) Մէկտե՛ղ, Շողիկ...:

ՔԱՀ.— Կը մեռնեմ... կը մեռնեմ...: Ների՛ր, թաթուլ, քո՛ պապին, դո՛ւ էլ Զարօ...: Ա՛խ, որ գիտե՛նայի... ա՛խ, կը մեռնեմ... հաւա՛ր, որդի՛ք...:

ԹԱԹՈՒԿ.— Օրհնութիւնդ, հա՛յր...:

ՔԱՀ.— (Նուաղ կոս) Աստըծոյ օրհնութիւն ձեր եւ ձեր սերնդի գլխին, որդի՛...: ասի՛ք եւ բազմանաք ծովերու աւազներուն պէս եւ լեցնէ՛ք, չէ՛նցնէ՛ք ձեր սուրբ վաթան...: Աստըծուն օրհնութիւն ձեր բազուկների, ձեր գէնքերի վրէն... ք՛ն... ք՛ն... կռուեցէ՛ք... վաթանի համար... արի՛ւն թափեցէք ազատութեան համար... վրէժ լուծեցէք էս վատերէն, չո՛ւր չքանայ իրանց սեբունդ...: Աստուած լէ էտպէս կ՛ուզի... ես... լէ... էս-

պէս... կ՛ուզի... (ձեռները զաւակներուն գլխուն դրած, զլուխը ետին կ'իյնայ եւ կը մեռնի, եւ քահանան զգուշութեամբ գետին կը պառկեցնեն ու ծնրաչոզ շուրջը կը բոլորուին) :

ԹԱԹՈՒԿ, ԶԱՐՕ, ԵՐԷՅԿԻՆ.— Վա՛խ պապէ... պապէ՛... տէրտէ՛ր...:

ԲԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԷՋԷՆ ԶԱՅՆԵՐ.— Աստուած խողին լուսաւորի...:

ԽՄԲԱՊԵՏ.— (Սուրբ պարզած) Յառա՛ջ, ընկե՛րներ, ի ծո՛ւնը նահատակ ծերութեան տոջեւ... (զինուորները կը բոլորուին եւ կէս ծնրաչոզ, հրացաններուն փողը գետին հակած, ի նճան սգոյ, իսկ Շողիկ եւ Յովիկ նոյնպէս ծնրաչոզ, դրօշակը կէս մը վար կը խոնարհեցնեն) :

ՏԱՄՆԱՊԵՏ.— Հանգիստ եւ խաղաղութիւն չարչարուած եւ խաչուած Հայութեան ոսկորներուն : Բայց փա՛ռք ու պատիւ Հայութեան, որովհետեւ անիկայ յղի է իր ապագայով, անիկայ փիւնիկի մը պէս իր ասիւններուն մէջէն պիտի վերածնի իբրեւ ազա՛տ Հայութիւն...:

ԽՄԲԱՊԵՏ.— Այո՛, ընկերներ, թաղե՛նք անցեալը իր վիշտերով եւ իր արիւնազանգ տառապանքներով պատանքուած, եւ իր գերեզմանին առջեւ յարգանքի եւ հրաժեշտի մեր հուսկ ողջոյնը մատուցանենք : Բա՛յց, անցեալին վրէժը մեր չրթներէն կախուած, դիմենք դէպի մեր պարտականութիւն, արիւնի ճամբէն դէպի ազատութեան հանգրուանը, դէպի վերածնող Ազատն Հայաստան : Օ՛ն, դէպի լե՛ռ, ընկերներ, վրէժը յաւէա ձեր չրթներէն կախուած...:

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ.— (Ոսկի ելած) Դէպի վրէժ...:

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻՋՆԷ



Գ Ր Ե Պ Ա Կ



Էջ ՏՈՂ

6	18	մարդասցին	կարգալ	մարթասցին
32	30	Սանձարձակ	»	Սանձակոծ
42	43	Էնոնց կը յիշես	»	Էնոնց անուռն կը յիշես



~~40740~~
№ 40740

Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ԿԱՄԱԻՈՐ ԳՈՒՆԴԵՐՈՒ
ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆՈՒԱԾ

Տպարան Սոկրատ Սարրաֆեան, Գահիրե